№ 11—12 (198) XVIII ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1908

Հ.Յ.Դ. ԲՒ
ԳՐԱԴԱ
A.R.F. BU
LIBRARY

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ



ՍԱՔՕ

# ՍԱՔՕ

Հայ յեղափոխական դիւցազներգութեան ամենահրապուրիչ դէմքերից մինն է, որ անհետանում է այնքա՛ն վաղաժամ և այնքան աբսուրդ ու անսպասելի ձևով... Խօլերան պոկեց մեր շարքերից մեր աննման Սաքօին, թողնելով ամենուրեք, նոյն իսկ կուսակցական շրջանակներից դուրս, պարապութեան ու սգի մի անդարմանելի զգացում... Մի չարաղէտ համաճարակ, որ համաճարակի կերպարանք էլ չունէր, որ գրեթէ իսպառ յաղթահարուած էր մեր երկրում, բախտի մի կոյր քմահաճոյքով պայթեց յանկարծ և իր բոլոր կատաղութեամբ այդ հսկայի վրայ, որ ազատւել էր այնքան անողորմ պատահարներից, որ մի քանի անգամ մեռել էր ու վերակենդանացել, որի առնատիպ կազմւածքը հեգնել էր միշտ ամեն տեսակ հիւանդութիւններ ու հարւածներ...

Յեղափոխական քարոտ ճանապարհի վրայ, ամենավսեմ իղձերով տոգորուած, քայլեց նա երկար, շարունակ զարնւելով խոչընդոտների, բայց և միշտ ամուր ու անվկանդ։ Սկսեց՝ ինչպէս սկսել էին մեր բոլոր անդրանիկ գործիչները և վերջացրեց վսեմ, փառահեղ ժեստերով, հանուր յարգանքի արժանացած, փառքի կարմրավառ լուսապսակը ճակատին... Մի գեղեցիկ, հազւագիւտ կեանք՝ հիւսուած ամբողջապէս մարտիրոսութիւնից ու հերոսութիւնից — այդպէս էր մեր սիրելի, մեր անմոռանալի Սաքօն։

Սակայն, այդ բոլորը չէ. պէտք է աւելացնել բուն սաքօյական այն մեծ գիծը, որ մի արտակարգ փայլ է տալիս այդ հերոսութեանը, դարձնում է նրան ոչ միայն ահեղ ու պատկառելի, այլև պաշտելու չափ ս ի ր ե լ ի։ Պէտք է յիշատակել այն չնաշխարհիկ պարզութիւնն ու համեստութիւնը, որոնք միացած մի անսահման բարութեան և մի ջինջ, գաղափարական անձնուրացութեան հետ՝ յաւերժացնում են հերոսին ժողովրդական հոգեբանութեան մէջ, դարձնում են նրան իրօք կրօնական պաշտամունքի մի առարկայ։

Նա երբէք չ՛ընկաւ եսի ետևից, երբէք չը տարւեց ցուցամոլութեան սին տենչերով, նա միշտ ղեկավարւեց պ ա ր տ ք ի, խղճի թելադրութեամբ։ Նա փառք չը փնտռեց — փառքն ինքը եկաւ շրջապատելու նրան՝ ժողովրդական միահամուռ ապօթէօզի ու գուրգուրանքի մէջ։ Մի մաքուր, անաղարտ նկարագիր, մի անես ու անպաճոյճ մարդ՝ որ առաքինութեան մի կատարելատիպ էր ընկերական յարաբերութիւնների մէջ, միշտ բարի ու վեհանձն, միշտ զիջող ու համբերատար և միշտ անտրտունջ սպասաւոր Կուսակցութեան ու Գաղափարի. — դա մի գանձ էր, մէկը հազւագիւտ բիւրեղներից՝ մեր անփառ իրականութեան մէջ...

Կուսակցութիւնը նրա պարծանքն ու պաշտամունքն էր, Կուսակցութիւնը նրա խիղճն էր և նա անպայման հնազանդութեամբ, դիսցիպլինի ամենավեհ ըմբռնումով գնում էր միշտ՝ դէպի ուր մղում էր իր հոգևոր Հայրը — դէպի տանջանքի ու ռազմի դաշտերը, դէպի ամենավտանգաւոր արկածներ։ Սաքօն թիւրքաց Հայաստանումն է, արիւնոտ ու հերոսական կռիւների մէջ, որ նա վարում է քրդական հրոսակների դէմ, ուրիշ կարող զինակիցների հետ, վարում է երկար տարիներ մերթ Վասպուրականում, մերթ պարսկական սահմաններում։ Սաքօն յետոյ (1896 թ.) յեղափոխական առաքելի գաւազանն առած դիմում է դէպի աւելի հեռու, աւելի բարձր, դէպի հայկական ազատութեան խրոխտ միջնաբերդը — դէպի Սասուն... Բայց բռնութեան վոհմակները կտրում են նրա ճանապարհը, Սաքօն նետւում է թիւրքական բանտը և ամբողջ երեք տարի մնում է այնտեղ (Մուշ), կախաղանի պարբերական սպառնալիքների տակ...

Ֆիզիքական ու հոգեկան տանջանքները չեն խորտակում ազատասէր ռազմիկի կամքը և բանտից յետոյ նա նոյն Սաքօն է, զւարթ, կենսուրախ և անհունօրէն անձնուրաց, պատրաստ ամեն զոհաբերութեան։

Վրայ է հասնում մի այլ փոթորիկ, հայրենիքի երկրորդ խոշոր հատւածի մէջ, — այն՝ որ յարուցել էր ցարի արիւնռուշտ կառավարութիւնը, թաթար հայատեաց աղաների հետ... Թիւրք-հայկական ընդհարումների մէջ հ ե ր ո ս ն արդէն ծաւալւում է իր բովանդակ մեծութեամբ, որովհետև ունի շ ա ր ժ ւ ե լ ո ւ մ ի փ ո ք ր ա զ ա տ ո ւ թ ի ւ ն, որովհետև անյաղթելի խոչընդոտներն էլ չեն գալիս կաշկանդելու նրա արծւի սլացքը... Ղազախը նրա հրամանատարութեան տակ... Սաքօն այդտեղ „դիւցազն“ է, իր ոսկեփառ զինւորութեան մէջ, աներևոյթ ու անպարտելի... Ժողովրդական երևակայութիւնը հաղորդում է նրան անսովոր յատկանիշներ։ Նա „Սաքօ-փատիշահ“ է թիւրք ժողովրդի աչքում։ Նա „պահապան հրեշտակ“ է հայ ազգաբնակութեան համար։ Նրանից դողում ու պատկառում են։ Նրա անձնաւորութեան ու գործերի շուրջը հիւսւում են երգեր, յօրինւում են առասպելներ։ Նրա հեղինակութիւնը ահագին է, անգամ հակառակորդների, թշնամիների մէջ. և դա սոսկ մտրակի, սոսկ բռնի ուժի մի հեղինակութիւն չէր, այլ և բարոյական մի կախարդիչ հմայք... որովհետև Սաքօն լանկթիմուրական գծերով օժտուած մի հրոսակապետ չէր, այլ մի ազնիւ ու վեհանձն մարտիկ, որովհետև նա միայն չէր զարնում արիւնածարաւ ու անգիտակից խուժաններին, այլ և յաճախ հանդէս էր գալիս, իբրև հաշտարար մի ոգի՝ համերաշխութեան քարոզներով լռեցնելու կոյր ու մոլորւած ֆանատիկոսութիւնը...

Ահեղ ու խորտակիչ մի ուժ՝ հօրդայական արշաւանքների դիմաց և միաժամանակ ազգերի համերաշխութեան մի համոզւած ռահվիրայ... Հերոսի այդ երկու գծերին ենք պարտական մասամբ, գուցէ մեծ մասամբ, որ ժողովրդասպան կռիւները Ղազախի գաւառում համեմատաբար շատ աւելի սահմանափակ ծաւալ ունեցան։

Վերջացաւ „կովկասեան վանդէայի“ անարգ կօշմարը, հայ մարտական կազմակերպութիւնը յաղթանակեց հակահայկական ու հակակուլտուրական սև ուժերի դէմ — և սկսւեց Դաշնակցութեան ռազմիկների համար աւելի „նորմալ“ գործունէութեան մի շրջան։ Սակայն այդ նորմալ կեանքը Սաքօնների համար չէր... Նա նորէն այնտեղ է, պ ա ր տ ա կ ա ն ո ւ թ ե ա ն փշոտ դաշտում, միշտ իր տեղը կանգնած, կուսակցութեան դրօշակի տակ, նրա հրահանգով՝ կռիւ է մղում գաղա-

փարազուրկ ու ապականուած տարրերի դէմ, մաքրում է հրապարակը կուսակցութեան անունը շահագործող խուլիգաններից, շանտաժիստներից,—մի կռիւ, որ նոյնպէս, դժբախտաբար, զերծ չէր արիւնից ու արկածներից։

Հայ ռազմիկը դադար չունի, եթէ նա գիտէ հնազանդուել իր խղճի ու դատողութեան հրահանգներին։ Նրա համար չկան անդորր կեանքի գեղածիծաղ „իդիլլիաները“, նրա համար չէ և „մանր, անարիւն աշխատանքի“, „մանր գործերի“ այն սակաւապետ հաւատամքը, որ բնորոշում է մեր երկրի մի կարգ ձախակողմեան կուսակցութիւններին... Նա պէտք է միշտ արիւն փնտռէ, նա պէտք է միշտ տանջանքի ու հերոսական մարզանքների աղբիւրից խմէ, որովհետև նրա հարազատ ժողովրդի մարտիրոսութիւնը վախճան չունի, որովհետև այդ ժողովուրդը, ի դէմս իր բոլոր հատուածների, դրուած քաղաքական ու ցեղագրական անօրինակ պայմանների մէջ՝ ստիպուած է մղել գոյութեան ամենատարրական պատերազմը, մարդկային ամենապարզ, ամենանախնական իրաւունքների գոռ ու արհաւրոտ ճակատամարտը...

Սաքօն վաղուց արժանացել էր խաղաղ կենցաղի իդիլլիային... Ժամանակ էր, որ ռազմիկի բազմատանջ մարմինը և նրա մեծ սիրտը հանգիստ առնէին իր նուաճած դափնիների վրայ... Բայց ահա մի ձայն նորէն կոչեց նրան... Մայր Արաքսի միւս եզերքից... Նոյն հայրենի ձայնն էր դա, աղերսագին ու սրտայոյզ, նոյն հարազատ ժողովուրդն էր, նրա երրորդ, ամենափոքրիկ բեկորը, որ պատմական մի հանդիսաւոր ու փոթորկոտ վայրկեանում կանգնած է անզօր ու անապաւէն, ենթակայ նոյն բարբարոս, վանդէական խաժամուժի յարձակումներին...

Սաքօն նորէն կապեց գարիբալդիական պայուսակը, նորէն արբեց վառօդի պաղ բուրմունքով և ճանապարհ ընկաւ... ձայնի ուղղութեամբ։ Բայց այս անգամ նրան չը վիճակուեց օգնութեան գալ իր սիրած ժողովրդին,— նզովելի պատահարը շանթեց նրան կէս-ճանապարհին։

Խե՜ղճ Սաքօ... Խօլերային ահռելի տանջանքների, հոգեվարքի երկարատև գալարումների մէջ զգա՞ց արդեօք, թէ որքան անողորմ է ճակատագիրը, „նախախնամութիւնը“, „աստուածը“... դէպի մի կեանք, որ եղել է ծայրէծայր մարմնացումն բարութեան ու ազնուութեան...

Անարգ բացիլները միացած ռուսական բռնակալութեան ճիրաններին՝ սպանեցին մեր անմոռանալի Սաքօին, նոյնիսկ մահուան հանգրուանում. նրանք թոյլ չը տուին, որ այն ժողովուրդը, որ գուրգուրել ու յաւերժացրել էր նրան իր երգերի ու առասպելների մէջ, համախմբուէր պաշտելի դիակի շուրջը և հսկայական թափորներով կատարէր նրա վերջին սգաշունչ ապօթէօզը...

*

Գնում են մին միւսի ետևից հայկական ազատամարտի անդրանիկ զինուորները. մէկն էլ մարեց հին, փառահեղ բոյլից, շարքերը նօսրանում են... Մխիթարական մի հանգամանք կայ, մի մեծ սփոփանք այդ նոր բացուող խնկելի շիրիմների հանդէպ.—այն՝ որ անձնուրացների բանակը արիւնաներկ ու վշտակիր հայրենիքում մօտեցել է իր նպատակին... գրեթէ արդէն հասնելու չափ։ Ապարդիւն չ՚անցաւ քսան տարուայ յուսահատ ու մրրկոտ պայքարը։ Ապարդիւն չ՚անցաւ օրհասական ու խօլական նահատակութիւնների արիւնազանգ շարանը... Սաքօն գիտակցում էր այդ և նա չ՚եղաւ իր կեանքի վերջալոյսին այնպէս անբախտ, այնպէս տխուր, անմխիթար, ինչպէս իր հարիւրաւոր ընկերները, որոնք ընկել են զարհուրելի մարտադաշտերում, „վրէ՜ժ ու ազատութի՜ւն“ մրմնջալով և որոնց անթաղ դիակները վաղուց փոշիացել ու կուլ են գնացել Հայաստանի հողմերին... Սաքօն մեռաւ մխիթարուած, թէև անյագ ծարաւով—էլի՛ ապրել, էլի, գործել հայրենի ժողովրդի համար, էլի՛ հաստատել ի դ է ա լ ը, կռուի ու ազատութեան յաւերժական գաղափարը...

Պատի՜ւ նրան։ Անձնուրացութեան, զուտ, անխարդախ իդէալիզմի հետամուտ հոգիները՝ ներշնչուելու, ընդօրինակելու միշտ անսպառ աղբիւր կը գտնեն Սաքօի ջինջ անձնաւորութեան, նրա հմայիչ կերպարանքի մէջ... Եւ եթէ երբեմն, գիտակցութեան խաւարումի վայրկեաններում, չոր ու կոպիտ նիւթապաշտութեան ասպետները, սկեպտիցիզմի հեղգ ու ամուլ հոսանքով տարուած, փորձեն արհամարհել „զուտ իդէալիզմն“ ու յեղափոխական մօրալի „վճռական հրամայականները“— յիշեցրէք նրանց... Սաքօին։

# ՄԵԾ ԿՆՃԻՌՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ

Օսմանեան պարլամենտը գումարուեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհի միահամուռ ու ջերմ շնորհաւորանքների մէջ։ Ցոյցերից, թափօրներից, հաւաքական բաղձանքների աղմկայոյզ արտայայտութիւններից յետոյ եկաւ, վերջապէս, վայրկեանը, երբ այդ միլիոնաւոր բաղձանքները պիտի ստանան օրինական նուիրագործում, պիտի դառնան կօնկրետ, շօշափելի իրականութիւն։

Կատարուեցին և բ ա ց մ ա ն անհրաժեշտ ձևականութիւնները, որոնք չ՚անցան առանց „պիկանտ“, ուշագրաւ տեսարանների։ Աբդիւլ Համիդը ապրեց դարձեալ մի պատմական mauvais quart d'heure, յիշատակելի, անմոռանալի։ Հոգեկան ծանր տագնապի մէջ նա չունեցաւ գէթ այն լղարիկ սփոփանքը, որ յեղափոխական առաջին Դումայի բացման միջոցին բաժին ընկաւ ռուսական ցարին. Նա ստիպուած եղաւ անձամբ ողջունել պատգամաւորական ժողովի բացումը, անձամբ կատարել իր հանդիսաւոր „ինքնաժխտումը“... Սպանիչ էր պարտականութիւնը, բայց անողորմ, հրամայական։ Եւ նա գնաց... Եւ տիրանի մեռելային կերպարանքը, լցուած ներքին անյաղթելի գարշանքով, մի քանի վայրկեան մնաց արձանացած իր օթեակում, վեհերոտ ու դողդոջուն—ամբողջ ժողովի պաղ, դժնդակ լռութեան մէջ... Դա մի վայրկեան էր, որի նմանը դեռ չէր տեսած Արևելքի բազմաչարչար մարդկութիւնը և որ արժանի է արձանագրելու տիեզերական պատմութեան էջերում...

Եւ հնչեց դահական ճառը... հիւսուած նոյն կոշտ,

տաղտակող կեղծիքներից, որոնցից հիւսուել են ամեն տեղ և ամեն ժամանակ, բոլոր նեղն ընկած բռնաւորների գահական ճառերը։ Աբդիւլ Համիդ բռնաբարելով համաշխարհային խղճմտանքն ու պատմական ճշմարտութիւնը, յայտարարեց հանդիսաւորապէս, թէ „իր անսասան բաղձանքն է՝ որ Թիւրքիան կառավարուի սահմանադրական ձևով“ և թէ ինքը նորէն տալիս է սահմանադրութիւնը ժողովրդին, ինչպէս որ վերցրել էր երեսուն տարի սրանից առաջ, „ժողովրդի տհասութեան պատճառով“...

Արձանագրենք ու անցնենք։

Հանդիսաւոր բացումից յետոյ—հանդիսաւոր խրախճան։ Խի՛նդ ու բերկրանք Եըլդըզի ապարանքում։ Խելայեղ ողջագուրումներ, որոտընդոստ կէցցէներ։ Ապօթէօզ... ինչի՞... Ազատութեան թէ՞ Արեան... Պառաւ աղւէսը իր դերի մէջ է. նա շոյում է, փառում, բորբոքում։ Նա պահպանում է ամբողջ սրահը իր իժային հիպնօզի տակ։ Ահմէդ Րիզան ևս իր „կոչման“ բարձրութեան վրայ է. այդ օպպորտիւնիստ միջակութիւնը, որ թիւրիմացութեամբ տեղ է բռնել յեղափոխականների շարքերում և որ այժմ զգում է ինքզինքը որպէս „կացութեան տէր“, մատնում է արդէն իր „ներքին մարդը“։ Աբդիւլ Համիդը սիրահարուել է նրա վրայ,—և սէրը փոխադարձ է... „Մեշվերեթի“ խմբագիրը այժմ պալատի ամենօրեայ, թանկագին հիւրն է, և անտարակոյս, մտերմական զրոյցների մէջ նա չի մոռանում շեշտել փադիշահի առջև իր անցեալ „համակրութիւնները“, հաստատել փաստերով, դօկումենտներով, որ ինքը յաճախ նոյն „Մեշվերեթի“ մէջ պաշտպան է կանգնել սուլթանական իրաւունքների՝ ընդդէմ հայասէր Եւրոպայի, որ նա իր գրչով հալածել է միշտ հայ ու բուլղար, մակեդօնացի յեղափոխականներին, յաճախ նոյնիսկ իրաւունք է տուել վեհապետին՝ արշաւելու „ըմբոստ, աւազակ ժողովուրդների“ դէմ, քաջալերել է անուղղակի հրոյ և սրոյ քաղաքականութիւնը... Այժմ էլ ահա Եըլդըզի պալատում, պատգամաւորական ժողովի հանդէպ, մի տեսակ հորթային հրճուանքի մէջ, իր դիրքով ու հմայքով արբշիռ՝ նա գովք է կարդում Կարմիր խալիֆին, նրա շրթունքներից մեղր է ծորում, օսմանեան փառապանծ արքայատոհմերի մասին խօսելիս—յիշւում են նաև երկրագնդի 500 միլիօն մահմեդականները, փառաբանւում է նրանց գերագոյն առաջնորդը, համիսլամական բարձրագոյն զառանցանքները համեմւում են ժէօն-թիւրքական հայրենասիրութեան պոռթկումների հետ և Եըլդըզը թնդում է ծափահարութիւնների որոտից...

Եւ այդ արեան ապօթէօզին—ցաւ է յիշել—մասնակցում են մի քանիսը հայ ժողովրդի պատգամաւորներից, մի քանի „խոհեմ“ ու գետնաքարշ „ազգայիններ“, որոնց թիւը, տարաբախտաբար, դեռ լէգէօն է մեր տղմոտ իրականութեան մէջ... „փօլիթիկի“, ցած, անարգ նկատումներով նրանք չը կամեցան յետ կենալ այդ ներօնական խրախճաններից, ուր սեղանապետի պաշտօն էր վարում հայ ժողովրդի անէծքը կրող դահճապետը։ Ազատութեան օրերում ևս այդ պարոնները ցոյց տուին իրենց գարշելի, անբուժելի ստրկամտութիւնը և թողին, որ բռնաբարուած ու խոշտանգուած հայութեան պատիւը, նրա պաշտպանութիւնը իրենց վրայ առնեն, իբրև մի տեսակ յաւիտենական մենաշնորհ, դարձեալ նրանք՝ որոնք մղել են սրբազան մարտը այդ ժողովրդի իրաւունքների համար և բռնակալութեան զնդաններում իրենց երիտասարդ կեանքերն են մաշել։ Դառն է... Անցնենք։

Եւ ահա մենք պարլամենտի ու նրա լուծելիք մեծամեծ կնճիռների հանդէպ։ Միապետին ընկճեցնելուց, բոլոր էական խոչընդոտները յաղթահարելուց յետոյ՝ օսմանեան յեղափոխութիւնը պիտի սկսէ այժմ վերաշինութեան օրգանական աշխատանքը։ Բայց արդէն յոռետեսութեան շեշտեր են հնչում համաշխարհային մամուլի մէջ, արդէն իսկ ծայր է տալիս դժգոհութիւնը „մանր“ ազգերի, մասնաւորապէս հայերի շրջանում։ Ջեղծումներ՝ ընտրութիւնների ընթացքում, զեղծումներ՝ պարլամենտի հէնց առաջին նիստերի միջոցին... Պատգամաւորական ժողովի կազմը չի ներշնչում անհրաժեշտ վստահութիւնը, նրա ճնշող մեծամասնութիւնը, որ և իրօք պիտի վարէ այսուհետև ահագին երկրի ճակատագիրը, շատ քիչ է պարունակում իր մէջ անհատներ, որոնք այդ երկրի պահանջների և իրենց քաղաքացիական պարտաւորութիւնների գիտակցութիւնն ունենան. նրանք ներկայացնում են հոծ ու գրեթէ միապաղաղ մի զանգուած, որ դիւրութեամբ կարող է տարուել երամական բնազդներով, խաղալիկ դառնալ շատ թէ քիչ „կրթուած“ դէմագօգների ձեռքերում... Նշանները երևում են արդէն։ Պատգամաւորական ժողովի մէջ ընդունւում են հռչակաւոր խուլիգանապետներ, ջարդի ու աւերի կազմակերպողներ Հայաստանում և հայ անդամների բողոքները այդ առիթով մնում են իբրև անապատի մէջ բառբառող ձայներ։ Հայի վկայութիւնը, ըստ աւանդութեան, մնում է դեռ անընդունելի, մի quantité negligeable,—նոյնիսկ այնտեղ, պարլամենտում „ջախջախիչ մեծամասնութիւնը“ հակադրում է միշտ իր խրոխտ ու վճռական veto-ն...

Կ՚առաջանա՞ն արդեօք պարլամենտական այդ ստուար մեծամասնութեան մէջ տարբեր շերտաւորումներ—այդ ցոյց կըտայ թերևս մօտիկ ապագան. առ այժմ օսմանեան պարլամենտին տոն տուողը նոյն „Միութիւն ու Առաջադիմութիւն“ կուսակցութիւնն է, որ հապճեպով ձևակերպել է իր քաղաքական դաւանանքի մի քանի ընդհանուր դրութիւնները, բայց որ տակաւին չի ներկայացրել որոշ, յստակ, մշակուած ծրագիր ու աշխարհա-

հայեացք։ Ծրագիրները գիտակցականութեան չափանիշ են. երբ նրանք չը կան կամ թէ կան միայն ընդհանուր, աղօտ ու շաբլօն ձեւով — ասել է՝ չը կայ կամ խիստ թոյլ է գիտակցութիւնը մի յայտնի մարմնի շարքերում։ Մի տեսակ հօրդային, մեքենայական համերաշխութիւն է, որ տիրում է առ այժմ Ահմէդ Րիզաների անունով երդւող անկերպարան զանգւածի մէջ։ Այդ երամական համերաշխութիւնը արտայայտւեց արդէն թէ պարլամենտի առաջին նիստերում և թէ սուլթանական պալատում խիստ անցանկալի ձեւերով․․․

Այդպիսի բնորոշ գծերով է ներկայանում մեզ Տաճկաստանի ամենահեղինակաւոր մարմինը իր մեծ, կնճռոտ, պատասխանատու գործի սկզբում։

Վատ սկսւեց․․․ Սակայն յուսահատ բացականչութիւններ արձակելու տեղիք չը կայ. զինւենք դարձեալ համբերութեամբ և աշխատենք լաւատես լինել։ Այդ բոլորը անակնկալ չէր մեզ համար, այլ միանգամայն հասկանալի ու անխուսափելի իրողութիւնների շարք, տրամաբանական մի տեսակ ֆատալ անհրաժեշտութիւն, խոպան անապատ մի միջավայրում, ուր ճշմարիտ կուլտուրայի ու գաղափարականութեան սերմերը դարերից ի վեր ընկել են միշտ ապառաժի վրայ, ուր կրօնը եղել է միշտ գրեթէ միակ ու գերագոյն ղեկավարը մարդկանց մտաւոր ու բարոյական համայնակենցաղի, ուր մինչև օրս, կարելի է ասել, չը կայ տակաւին մ տ ա ւ ո ր ա կ ա ն ո ւ թ ի ւ ն բառիս իսկական նշանակութեամբ,— մտաւորականութիւն, իբրև դասակարգ, իբրև հասարակական վարիչ, առաջնորդ ժողովրդական զանգւածների․․․

Ոչ, անտարակոյս. Յեղափոխութիւնը չէր կարող մոգական գաւազանի մի հարւածով վերածել արճիճը ոսկու, յեղաշրջել մի զարհուրելի, բազմադարեայ հոգեբանութիւն, քաղաքակրթութեան ու ազատութեան գիրկը նետել նահապետական, խաւարակուռ մի գոյութիւն․․․ Մարդատեցութեան, ազգային հակամարտութեան պղտոր հոսանքը եւս դեռ կը շարունակւի, իներցիայի (inertie) տիեզերական օրէնքով և օսմանեան պարլամենտի մէջ դեռ երկար կ՚եռան խուժդուժ բնազդներն ու կրքերը, ինչպէս որ Հայաստանում ու Մակեդոնիայում դեռ գուցէ երկար կը շարունակւի—աստիճանաբար մեղմանալով — թալանի ու սպանութեան համաճարակը․․․ Չը զարմացնենք, ուրեմն, աշխարհը մեր միամիտ, կրաւորական ողբերով, հառաչանքներով, այլ ապաւինենք մեր ուժերին և առաջ գնանք, կազմակերպւած ու վճռական՝ միշտ իբրև կռող մեր սեփական ճակատագրի, միշտ քննադատելով ու պայքարելով։

Սկսւում է օրէնսդրական աշխատանքը և Թիւրքիայի բոլոր ազատախոհ հատւածները արթուն կերպով պիտի հսկեն, որ սահմանադրութեան ազդարարած սկզբունքները դառնան կենդանի իրականութիւն։ Երկրի շահը հրամայականօրէն պահանջում է, որ պարլամենտ ու մինիստրութիւն, ըստ կարելւոյն կարճ կապեն ու խաղաղութեամբ վերջացնեն արտաքին քաղաքականութեան առկախ մնացած կնճիռները, որպէս զի կենտրօնացնեն իրենց բովանդակ ճիգը և պետութեան համեստ ֆինանսները ներքին անհրաժեշտ բարենորոգումների վրայ։ Թիւրք նացիօնալիստներից ոմանք կարող են ներկայ տագնապալի վայրկեաններում ըղվա՞նշ աղաղակել և յաղթականօրէն նիզակներ ճօճել Բուլգարիայի, Յունաստանի դէմ—դա բնաւ չի ունենայ որևէ առնչութիւն երկրի իրական շահերի հետ, որոնք թելադրում են՝ միանգամ ընդմիշտ հրաժեշտ տալ վաղուց կորուսած սեփականութիւններին և զբաղւել՝ մ ն ա ց ա ծ ը ծաղկեցնելով ու ամրացնելով։

Ազգային ներկայացուցչութեան առաջին, կարդինալ մտահոգութիւնը պիտի լինի՝ հաստատել ճշմարիտ ժողովրդական գերիշխանութիւն։ Դրա համար անհրաժեշտ է նախ և առաջ, սահմանել մի արդար ու բանաւոր ընտրողական աշխարհագրութիւն և ընտրողական մի սիստէմ, որպէսզի պարլամենտը լինի իրօք համաժողովրդական ներկայացուցչութիւն։ Մինիստրական պատասխանատւութիւնը պարլամենտի առջև, իբրև ժողովրդի գերիշխանութեան ամենաէական ստորոգելի՝ պէտք է հաստատւի ոչ միայն թղթի վրայ, այլ և ամենօրեայ իրականութեան մէջ. յեղափոխական ողջմտութիւնը պահանջում էր ներկայ վայրկեանում կառավարութեան գլուխ կանգնեցնել նոր, աւելի թարմ ու ժամանակակից անհատներ և հեռու պահել իշխանութեան ղեկից այն բոլոր զառամեալ կուրտիզաններին, որոնք, որքան էլ համեմատաբար լինին մաքուր ու անկաշառ՝ այնուամենայնիւ որոշ չափով պահպանում են իրենց վրայ հին, նզովեալ րէժիմի դրոշմը և չեն կարող համապատասխանել նորագոյն առաջադիմութեան պահանջներին։ Տարաբախտաբար, այդ կողմից օսմանեան պարլամենտի մեծամասնութիւնը պահանջկոտ չ՚եղաւ և Քեամիլ փաշայի մինիստրութիւնը դժւար թէ փայլուն գործնական լինի վաղւան բարդ, դժւարին ու պատասխանատու խնդիրների բարեյաջող լուծման համար։

Վաղւան գործը հսկայական է իր ծաւալով ու կշիռով։ Բաւական է յիշել, որ հանրային գոյութեան բոլոր ֆունկցիաները—վարչական սիստէմ, դատաստանական սիստէմ, զինւորական, ֆինանսական, կրթական սիստէմներ և այլն — պիտի ենթարկւին հիմնական վերիվայրումի՝ նոր, սահմանադրական օրէնքի խարիսխի վրայ։ Այդ մեծ յեղաշրջումը ի կատար ածելու համար՝ անհրաժեշտ են և մեծ միջոցներ,—ֆինանսական մի պատկառելի ույժ․․․ Իսկ երկիրը—հիւծւած, ուժասպառ ու սովամահ․․․ Նոր պետական իմաստութիւնը, այնուամենայնիւ, կարող է ելք գտնել այդ կախարդական շրջագծից, նա կարող է բարձրացնել երկրի թշւառ, քայքայւած ֆինանսները, առանց դիմելու նախկին րէ-

ժիմի սիրած միջոցներին, առանց ծանրանալու ժողովուրդների վրայ նորանոր հարկերով: Շա՜տ են արդէն ծծել նրանց կենսական հիւթը, այժմ պէտք է հատուցանել... Հարկային ամբողջ սիստէմը պէտք է բարեփոխուի այնպէս՝ որ հարկատուն ազատ մնայ, վերջապէս, անհամար տուրքերից, որպէսզի նա գիտնայ հաստատապէս, որ իր տուրքը իրօք պիտի մտնէ պետական գանձարանը: Երկրի ֆինանսները ծաղկեցնելու միակ միջոցն է՝ ուժ տալ նրա արտադրողական կարողութիւններին, զարգացնել հաղորդակցութիւնն ու առևտուրը, ստեղծել բոլոր նպաստաւոր պայմանները՝ նորագոյն արդիւնաբերութեան ազատ, անկաշկանդ պատւաստման համար: Այդտեղ, մանաւանդ գործունէութեան այդ ասպարէզում, անհրաժեշտ է մեծ, անսովոր ճիգ: Եւ այդ ճիւղի մէջ պէտք է դարձեալ ամենից առաջ իրագործել բեղուն, շինարար աշխատանքի ամենատարրական պայմանը, այն՝ որ համիդեան ռէժիմը երբէք չը կարողացաւ իրագործել — *հանրային ապահովութիւնը*: Դարձեալ, ուրեմն, գալիս ենք մեր ելակէտին — վարչական յեղաշրջման ծանր հարցին:

Քաղաքական-վարչական մեխանիզմի յեղաշրջումը առ այժմ այն առանցքն է, որի շուրջը պտտւում են բոլոր ուրիշ խնդիրները: Նրանից սերտ կախումն ունի *ազգային հարցը*, ցեղական յարաբերութիւնների մեծ կնճիռը: Ի՜նչ սոսկալի հողմեր են շարժւում այդ զարհուրելի հրաբխի մէջ... Ի՜նչ ահեղ անակնկալներ է պատրաստում նա երկրի նորմալ, բնականոն զարգացման ճանապարհին... Ո՞վ կարող է գուշակել: Պարզ է սակայն, որ հողմերը անխուսափելի են, նրանք արդէն իսկ ծանուցւում են... Պատգամաւորական ժողովի մէջ մեծամասնութիւն կազմող թիւրքերի կողքին նստած են յոյներ, քրդեր, հայեր, արաբներ, ալբաններ, սլաւներ, որոնք այնպէ՜ս խէթ են նայում իրարու վրայ և բոլորն էլ՝ թւով գերակշռող մեծամասնութեան վրայ: Եթէ չը լինէր մեր սեփական փորձը, արևմտեան ազգերի փորձերը բաւականաչափ հրահանգիչ էին արդէն: Իսկ մեր օսմանեան միջավայրը դեռ որքա՜ն յետ է մնացած արևմուտքից...

Տաճկաստանը բնաւ, դժբախտաբար, չի ներկայացնում նորագոյն տիպի ազգային պետութիւն (Nationalstaat). Նա չի մօտենում ոչ Աւստրիային, ոչ իսկ Ռուսաստանին: Երկու վերջին պետութիւնների մէջ չը նայած այլ և այլ տարրերի մրցման ու հակամարտութեան, կայ, այնուամենայնիւ այդ այլազան տարրերի միջև կուլտուրական, քաղաքակրթական որոշ *ազգակցութիւն*, նմանութիւն: Օսմանեան կայսրութիւնը տարբեր ցեղերի մի հաւաքոյթ է, մի կոնգլօմերատ, նման մօտաւորապէս հին Հռոմին. Նրա առանձին հատւածները չեն շաղկապւում բնական կապերով, կուլտուրական ազգակցութիւնը բացակայում է, *շաղախը* չը կայ...

Այդ շաղախն է, որ պէտք է ստեղծել. իսկ նա կըստեղծւի միայն և միայն *ժամանակակից իրաւակարգի* հաստատումով, որի ընդարձակ, ռամկավարական շրջանակներում բոլոր ազգերը, հաւասար իրենց իրաւունքներով և հաւասար պարտաւորութիւններով, աստիճանաբար կը տոգորւին համերաշխութեան մեծ դաւանանքով և ի վերջոյ կը ձուլւին ի մի ընդհանուր, քաղաքակիրթ հասարակութիւն:

# ԹԻՒՐՔԻԱ

## ԱԶԳՈՎԻՆ ՃԻԳԸ

Սահմանադրական գոռ ու խելայեղ ցոյցերուն, զոր Բիւզանդիոնը երբէք տեսած ըլլայ, գաւառներէն հայ ժողովրդի սովամահ լինելու սև լուրն է որ կը հասնի իբր խօլ արձագանք: „Հաց, հաց“ կ'աղաղակեն ամեն կողմէ: Ազատութեան արևը չտաքցներ նօթի և սուաղ մարմինները, որոնք կը դողդոջին ձիւնի և բուքի խարազաններուն տակ:

Վտանգը մեծ է հայ ժողովրդին համար, բնական պատուհասը — մարդկային անագորոյն պատուհասներէ յետոյ — սովը, Եգիպտոսի սատակիչ հրեշտակին պէս, կըսպառնայ անճիտել հայ ժողովուրդը... արիւնոտ դըռները ափ առնելով: Ամբողջ ժողովուրդ մը, աշխատասէր և առոյգ, արիւնի ու քաղաքական ահուդողի տակ ջղային այլասեռումի արատները կրելէ յետոյ, սովի, սրածութեան կ'ենթարկւի և կ'անդամալուծւի: Հարուած հարուածի վրայ. խաղաղ ու երջանիկ սերունդներ հարկաւոր են որ մոռցնել տան մեզի արհաւիրքի սարսուռները, որ բարբարոսութիւնը մեր երակներուն ու մկաններուն մէջ բանդակեց:

Սովը բնական չէ Թիւրքիոյ մէջ և ոչ ալ համատարած արշաւանքներ կ'ընէ: Արուեստական ու բռնի է ան, ծնունդ այն ռէժիմին, որ ունեցաւ դիւային հերոսներու իր լէգէօնը, որ երբէք չէին ծծած „բարութեան կաթը“ — *the milk of kindness*, — անոնք անգթօրէն,

„Մեր բոլորին համար վաղուան մահը սերմանեցին“:

Սովը գետի պէս կը զիկզակէ, կը փնտռէ մասնաւորապէս ուր հայութիւն կայ. հին ռէժիմը ճամբան գծած էր արդէն „Մահուան իշխանին“. պատմութեան ցանկէն հայ ցեղը բնաջինջ ընելու դժոխային յղացումով մը:

Անցաւ այդ ռէժիմը, այո. բայց իր բարոյական ու նիւթական աւերները կը մնան, որոնց վրայ ապրող մեռելներ կը թափառին անմարդկային բըքինջներու տարափին տակ: Նոր ռէժիմը եկաւ, հայուն ճակատագիրը անփոփոխ մնաց. օդին մէջ մեծ շռինդով գեղեցիկ բառեր, ֆրազներ կը թաւալին, խրախճանքներ կը սարքւին երբ անդին գազան անօթութիւնը առասպելական հրէշին պէս կը ճանկռտէ սարաբախտ կուրծքերը, երբ մահը կը շարունակէ իր սիրած հունձքը: Բինկեանը, որ ծնաւ

Բաբկէն Սիւնին, քառասուն մանուկներու „սև հողերը“ կունենայ... Օդը կը թնդայ ուրախութեան ու... տաւուլի ձայներով... կարծես խեղդելու համար վերջին հռնդիւնը հոգեւարքներուն, ինչպէս Բաաղի հրաշէկ գրկին մէջ զոհերու ճիչը...

Կառավարութիւնը հազիւ կը սիրէ հետաքրքրուիլ սովի մասին, կը ցնցւի երբեմն օրհասական ճիչերէն. ան մեր ճակատագրին ձգած է... ապակեդրոնացումի սիստէմով։ Այն ապշեցնող հերքումները, հապա՛, զոր թիւրք մամուլը կը հրամցնէր ժողովրդին, ամենուրեք հայկական „չափազանցութիւններ“ տեսնելով և կլլեցնելով այնպիսի լուրեր, որ կասկածելի և եղեռնային աղբիւրներէ կը բղխէին բաւական է որ զոհերը հայերն են, „նպատակը միջոցը կ'արդարացնէ“։ Կառավարութիւնը հազիւ-հազ կը շարժի և ակամայ իր շտեմարանները կը բանայ, որոնք ճակատագրի եօթը կնիքովը կնքւած են. և ամիսներով փտեցուց ցորենը ու չբաշխեց անօթի ժողովրդին։ Նոյն կառավարութիւնն է որ նորէն՝ սովահար ժողովրդին տրւած նպաստի դրամը կը խլէ տուրքի փոխարէն;—ինչպէս համիդեան րէժիմին օրով կը յափշտակէին եւրոպացի բարերարներու հայթայթած լծկանները և գործիքները—շատ տեսնելով անոնց պատառ մը չոր հացը։ Գաւառներէն մեզի եկած նամակները ամենքն ալ նոյնը կը վկայեն։ Բոլոր ոճրապետները, որոնց ամբարները ցորենէ կը պատռտին, և որոնք շագալի պէս դիակներ կողոպտելով հարստացած են, անկարեկիր կը մնան ահաւոր և շանթահարող թշւառութեան առջև... ամեն տեղ վայրագ տմարդութիւնը կը տիրէ։—Եղբայրութի՛ւն... երբէ՞ն ի վեր։

Խե՛ղճ հայ ժողովուրդ, քու երդիքիդ տակ բազմած չարագործները, քու քրտինքիդ եղումեղը վայելողները, կը շնարբենան բ ա յ ա յ ի հոգեւարքիդ ողբերգութիւնը ըմբոշխնելով, դաժան ծիծաղով կը պատնեն քեզ, երբ դուն հողը կը կրծես... հողին դառնալու համար։ Երբեմնի քու չէն գիւղերուդ վրայէն, ուր առատութիւնը կ'արգասաւորէիր, հովեր միայն կ'ոռնան և... մարդկային շագալներ։ Դուն զոհն ես Արևելքի յաւիտենական բռնակալութեան, որ մարդկային գազանութիւնը աստւածացուց. և գուցէ դատապարտւած ես դեռ զոհւելու յանուն „հիքմէթը հիւքիւմէթ“-ին, այլապէս յանուն սահմանադրական ազատութեան, ինչպէս ենթադրել կուտան „մեծ խորհողները“, „պատգամները“ նոր րէժիմին, որոնք մարդկութեան հինցած էջերը կը քրքրեն ու ցեղային նախապաշարումներու, տիրողի ու գերակշռութեան անփառունակ անիմաստութիւնները կամ իմաստակութիւնները կը շեփորեն։ Ճահիտ պէյ՝ „Ազրայէլը“ կը հանդիսանայ այդ ցաւագար մտայնութեան, կարծելով որ իր գրիչը „Արկայլի Նիզակն“ է, որուն առջև ազգերը զինաթափ պիտի ըլլան իրենց դարաւոր էութենէն։ Այդ մտայնութիւնը այնքան գարշելի է, որքան Եըլդըզի տեսիլը...

Գաւառի հայութիւնը մեծ ճգնաժամ մը կ'անցնէ. մահւան արահետներէն կը քալէ ան։ Առիչգոյէ օտար կարեկցութեան, ազգն է որ պիտի վեր պրկէ խրոխտ ու առնական ժէստով և փրկէ սովի ճիրաններէն իր եղբայրակիցները։ Սիկիլիոյ սարսափելի աղէտին, Իտալիոյ ժողովուրդը ազգային միահամուռ խոյանք մ'ունեցաւ. այդ սրտաշարժ թռիչը չէ որ կը պակսի մեզի պէս ժողովրդի մը համար, որ դարերէ ի վեր կապրի համայնական ոգով և հաստատութիւններով, և հայ անունին տակ միաձուլած է իր դժբախտութիւնը ու երազները։ Ուր որ հայութիւն կայ պէտք է պատերազմ յայտարարէ սովին դէմ,—հին րէժիմին սև կտակը։ Ամերիկահայերը, այդ կորիճ և պատւական տարագիրները, իրենց խնայողութիւններով ցարդ կրցան վառ պահել հայրենիքին մէջ այնքան մարած օճախներ. այս սևօրին նորէն անոնք են որ զոհաբերութեան ու կարեկցութեան լաւագոյն օրինակը կ'ընծայեն։ Մեր ժողովուրդը մէկէ աւելի յուզիչ օրինակներ ունի ինքնաբեր ու զգայուն զոհողութիւններու, որ պատւաբեր էին մեր գիտակցութեան. այրիի լումաներ շատ ինկան ի նպաստ Զէյթունի և Հայաստանի սովեալներուն։

Հայութեան մէջ ժողովրդական ազնւութիւնը միշտ գերակշիռ եղած է, անոր համար որ մեր ազգային կեանքին մէջ ժողովրդի վեհապետութիւնը աւելի շեշտւած և բնազդ եղած է։ Եթէ կարելի է մեղադրել մէկ բան, այն է որ մեր ժողովուրդը իր պարտականութեան լիովին կատարումին հետ, չունի ազգային շահերուն վրայ հսկելու փութկոտ առաքինութիւնը, ուրկէ, բնականաբար, կ'օգտւին խաչագող ազգայինները։

Այդ պարտքը, հասուն գիտակցութիւնը կ'իյնայ Ազգային ժողովին, որ դժբախտաբար մեր մէջ գեղեցիկ, այլ ամուլ ձևականութիւն մը եղած է, քան դրական ու հեղինակաւոր հաստատութիւն մը, այնպէս որ այդ ժողովին գոյութիւնը կամ չգոյութիւնը մեր կեանքին և բարքերուն մէջ զգալի ցնցում առաջ չի բերեր։ Խօսքի աղօրիք մըն է, որ եթէ ալիւր աղացած ըլլար, մէկ տասներորդով հայ ազգը սովէ կարող էր ազատել։

Այսօր իսկ այդ ժողովը, ուր այլանդակ և յարաշարժ տարրեր կը քովքովին, չգրաւականներ մեր ակնկալութիւնը։ Սնոտիութիւններու, անպարկեշտութիւններու աղբակոյտ մը կայ մեր առջև, որուն վրայ երբեմն „սեբոբէական“ Օրմանեան նստած, իբր Նոր Յոբ երանելի, սատանային ոսկեղէն ու հեշտալուր փորձութիւնները կ'ակնկալէր... ծիծաղելով։ Մօտիկ անցեալ մը կայ, զոր պէտք է մաքրագործել. շատեր, ի հարկէ խղճի անդորրութիւննով ու առանց ամօթկարմրութեան պիտի չհամարձակին յուզել հին հարցեր և պաշտպանել պարկեշտ ուղղութիւն մը։

Բայց որովհետև գոյութեան խնդիրը ամեն բանէ առաջ է, Ազգային ժողովը, ազգին հետ համերաշխ, օգնութեան փութալու է անմնունդ թշւառներուն։ Այսպիսի պարագաներու մէջ շատ չեն խօսիր, այլ կը գործեն. „նախ ուտել յետոյ փիլիսոփայել“։ Սովը մեծագոյն պատուհասն է ոևէ ժողովուրդի համար. հրդեհ կամ երկրաշարժ չէ, ուրկէ փախչիս ազատիս. ան կառչած է մարմնիդ և նոյնացած անոր հետ կը կրծէ զայն։ Ի զուր չէ որ Գերմանիոյ „խելացի“ կայսրը խորհուրդ կուտար Եըլդըզին „տնտեսապէս քայքայել հայերը“, լուռ և խուլ ոճիրը, որ քաղաքական նշանակութիւն չէր ունենար, և որուն մեղքը... բնութեան վզին կը պլլէր միայն։

Երկու կերպ չկայ անօթին հաց և մերկին հագուստ տալու համար. համբերութիւնը ուրիշ պարագայի մէջ առաքինութիւն մ'է թերևս, բայց անօթութեան պահուն ոճիր։ Զսպասենք որ ձիւնը յաւիտենական և երկնային պատանքը ըլլայ այդ անժառանգներուն, որոնք,

յանուն հայ ժողովրդին, գահիճին էն զարհուրելի հարուածները կրեցին տարիներով ու գլխացան և լօշտակի պէս խրւած մնացին մայրենի հողին։ Գտնել մանաւանդ մարդիկ, որ նպաստի բաշխումներուն պահուն... „տգէտ" ըլլան թշւառութիւնները շահագործելու շնական արհեստին մէջ. մասնագիտութիւն մը, որ իր երկնային գագաթնակէտին հասաւ „աստուածաբան" Օրմանեանի պատրիարքութեան օրով։ Իզմիրլեան պատրիարք քաղաքացիական առաքինութեան օրինակը լինք տւաւ, իր ամսականին մեծագոյն բաժինը յատկացնելով յուսահատ ժողովրդի ստիպողական պահանջին։ Հայկական դժբախտ ու ցաւոտ իրականութեան մէջ, հայ զաւակներու անօթի դիակներուն հանդէպ, թերևս ժողովրդական պատրիարքը ուզեց յիշեցնել հայ պճնասէր հոգևորականութեան—որ իր „գանձերը" կը դիզէ երկրիս վրայ—իր սրբազան պարտականութիւնը և բ ա ր ո ւ թ ե ա ն երկրայնութիւնը։

Պահանջել որ կառավարութիւնը իր խոստումները կատարէ,—թէև հինէն ի վեր Թիւրքիան համբաւաւոր եղած է իր շռայլ „խոստումներով", զոր երբեք չէ կատարած և միշտ կը սիրէ խօսքով „փիլաւ" եփել — բանալ ամբարներու բերանը, յատկացնել սերմցուի խոստացւած գումարը, հողագործ ժողովրդին անմշակ ու սարսափահար դաշտերը խնդացնելու համար, ետ դարձնել տալ կողոպուտները և կալւածները. որովհետև, առանց հողի, անոնք վաղը նորէն դատապարտւած են անօթի մնալու և մուրալու։ Եւ մանաւանդ քաղաքացիական բացարձակ ապահովութիւնը երաշխաւորել անոնց,—ոչ այն երաշխաւորութիւնը, զոր Թիւրքիա կը խոստանայ Պերլինի 61-րդ չարաբաստիկ յօդւածով։

Ցանուն բարձրագոյն արդարութեան և մարդասիրութեան պէտք է ծախել Իզզէթներու ու Մէլհամէներու և բոլոր եղեռնագործներուն կալւածները, „արեան գին" են անոնք, և յատկացնել թշւառութեան զոհերուն անխտիր։ Ժամանակն է որ „նիհար եզերը ուտեն պարարտ եզերը"... ինչպէս „մէպուս" էֆէնտիները խրախճանեցին փատիշահին սարդանապալեան ճաշը, ուր աներևոյթ ձեռք մը կը պակսէր միայն...

Օսմանեան ազատագրական շարժումը գեղեցիկ օրինակներ տւաւ. „անարիւն յեղափոխութիւնով" նոր դարագլուխ մը բանալով ազգերու պատմութեան մէջ. այդ իր քաղաքական բախտաւորութիւնն էր. բայց իր արդարադատութիւնը թոյլ էր. ռէժիմին անունը փոխւեցաւ, իրերը իրենց նախկին վիճակին statu quo-ին մէջ կը մնան։ Օսմ. Յեղափոխութեան հասարակական ու ժողովրդասիրական ոգին խորութիւն չունի, ոչ ալ լայնութիւն։ Այդպիսի մեծ յեղաշրջում մը մարդկայնական հզօր ակօս հերկելու էր կեանքի ընթացքին վրայ, և փոթորկելու տիեզերական մեծ սկզբունքներ. սակայն ուրիշ, աւելի փցուն և ճղճիմ մտահոգութիւններ կը թշնամանեն նսեմացնել մեր աչքերէն ինչ որ կը կը բովանդակէ Յեղափոխութիւն բառը իր էութեանը մէջ։ Խլել պաշտօնական կամ անպաշտօն չարագործներու ժողովրդէն յափշտակած ինչքերը, լիովին վերադարձնել զանոնք իրենց տէրերուն՝ որոնցմէ շատեր արդէն դժբախտացած կամ խորհրդաւոր կերպով սպանւած են, կամ ծախել սովեալներու օգտին, ա ր դ ա ր ա դ ա տ ո ւ թ ե ա ն էն գեղեցիկ և օրինակելի էջը պիտի կազմէր օսմ. յեղափոխութեան պատմութեան մէջ և բարոյականի կրթիչ դաս մը պիտի ըլլար ապագայ սերունդներուն, որ ճակատագիրներ պիտի վարեն։

Ֆրանսական Յեղափոխութիւնը ընդհանուր իդէալ մ'ունէր, ան մեծ առաքինութիւններու և հոյակապ ժէստերու ու սկզբունքներու սերմերը նետեց աշխարհի չորս հովերուն և խաւարի դարերուն վրայ. անոնց տրիբունները տիեզերքի անունով կը խօսէին, ան դողացուց բոլոր բռնաւորները և սարսեց գահերը։ Ատոր համար էր որ ըսւեցաւ թէ „ազգերը երկու հայրենիք ունին, իրենցը և Ֆրանսան"։ 1789-ի իդէալը փայտերով հալածեց՝ միապետութեան բանակները։ Թրքական յեղափոխութիւնը իր տարօրինակ պատգամները ունի, անոնք „իրապաշտ" ըլլալ կ'ուզեն, առանց թռիչի և իրենց „ալլամերժ" մտածելակերպը մարդկային կատակերգութեան երևոյթը կ'առնէ։ Ընդհանուր իդէալներ չեն որ կը մուսայեն անոնց երևակայութիւնը և ոչ ալ լայն նպատակներ են որ կը յափշտակեն զիրենք։ Անոնց քնարը չ'արթնցներ լուռ մուսաները և չունին ցանկալի համերաշխութեան լարերը...

Օսմանեան յեղափոխութիւնը առանց մեծ ներշընչումի, առանց ծաւալող հորիզոններու, անփորձ ու ազգայնամոլ գրիչներու տակ կարող է կորսնցնել իր սկզբնական հմայքին ուժը և մթարիլ։

Ֆրանսական յեղափոխութիւնը դարձեալ կը մնայ համաշխարհային աղբիւրը, իր „անմահ սկզբունքներով", իր տիեզերականութիւնով, ուրկէ բոլոր ազգերը կարող են ըմպել կենդանարար հիւթը և մարդկային էութեան մեծութեան սարսուռը ու գինովութիւնը ունենալ։

Թիւրքիան տւաւ մեզի, ճիշտ է, „անարիւն յեղափոխութիւնը, բայց կսպառնայ տալ նաև... անարիւն իդէալը։

# ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ԱՐԵԱՆ ՌԷԺԻՄԸ

Վրէժխնդրութեան ծարաւը յագուրդ չունի մեր գազանատիպ բիւրօկրատների աշխարհում... Նորէն ու նորէն կախաղաններ, սպանդանոցներ, քաղաքական յանցաւորների անվերջ, անողորմ բնաջնջում։ Անցեալ տարի 1300 մահավճիռներ են արձակւած և 700-ը իրագործւած։ 700 երիտասարդներ թարմ, կենսալի, գաղափարական—700 յոյսեր դժբախտ, նահատակ Ռուսաստանի... Ահա նոր տարուն թևակոխելիս՝ մի նոր սպանդանոց, արեան մի նոր հսկայական բաղնիք—Եկատերինօսլաւում։ 1905-ի ըմբոստացման հերոսներն են, որ տասնեակներով նետւում են ցարական կարմրազգեստ բորենիների առջև։ Եւ նրանք լակում են մարդկային արիւնը անյագ, անվերջ... Ամբողջ լուսաւոր աշխարհն է բողոքում այդ գազանացած թշւառականների դէմ—ոչի՛նչ։ Ռուսաստանի ծերունազարդ առաքեալն է ցաւի ու զարհուրանքի ճիչեր արձակում — ոչի՛նչ... Պաղ, անասնական վրէժխնդրութիւնը իր գործն է տես-

նում, ոտնահարելով մարդկային ամենասուրբ իրաւունքները, արհամարհելով տիեզերական խղճի յուսահատ աղաղակները...

Եւ կայ, սակայն, այդ նզովեալ աշխարհի մէջ սահմանադրութիւն, պարլամենտ, կայ մինիստր-նախագահ, որի զազիր շրթունքներից լսւում են յաճախ արդարութեան ու մարդկային իրաւունքների ջատագովումներ... Կայ, այո, մի նողկալի մարդ, երբեմն հռչակւած իբրև ազատամիտ, սահմանադրական, բայց որ ձգտում է գերազանցել պատմութեան բոլոր բռնաւորներին, ձգտում է հիմնել Ռուսաստանում մի այնպիսի ռէժիմ, որի առջև նսեմանային անցեալի բոլոր բռնակալական արհաւիրքները։

Եկատերինօսլաւի մասսային կոտորածը մի անգամ ևս ցնցեց ծայրէ ծայր ամբողջ կայսրութիւնը. Նա ուժեղ արձագանք գտաւ և արևմտեան մամուլի մէջ. սարսափի ու նզովքի խօսքեր գնացին բոլոր կողմերից՝ Պետերբուրգի վամպիրների հասցէին։ Դուման էլ մի վայրկեան փոթորկւեց—այդ չարաշուք հաստատութիւնը, որ դարձել է բիւրօկրատական բոլոր ոճիրների նւիրագործող ու քաջալերող։ Դուման էլ փոթորկւեց, բայց ինչպէ՞ս... սահմանադրական փոքրամասնութիւնը յանձին Միլիւկօվի բողոք յարուցեց ու մնաց մենակ, կծկւած։ Նրա չափաւոր, մեղմ բանաձևը հանդիպեց „հօկտեմբերեան“ ստւար բանակի դիմադրութեան... Անգամ այդպիսի պարզ, մարդասիրական մի խնդրի մէջ Դումայի սողուն մեծամասնութիւնը մերժեց առաջ գնալ և գէթ մի քայլով, մի թեթև ժեստով արդարացնել իր դժբախտ անունը, որ կապւած է 1905-ի հօկտեմբերեան բազմախոստում „մանիֆեստի“ հետ... Նա մերժեց ձայն տալ յօգուտ դահճի ճանկերում գալարւող այն երիտասարդ-հերոսների, որոնք երեք տարի առաջ յեղափոխական համատարած ուրագանի միջոցին իրենց ձեռքն էին առել Կատարինեան երկաթուղու գիծը և մղել էին այն մեծ կռիւը, որ սարսափի ու օրհասի մատնեց բռնապետութիւնը, որ խլեց հօկտեմբերի 17-ի մանիֆեստը և որի շնորհիւ նոյն „հօկտեմբերեան“ մարդատեացների վոհմակը նստած է այսօր երրորդ Դումայում, իբրև գոռոզ իրաւարար ամբողջ կայսրութեան...

Մի համեստ առաջարկ, մի մեղմ բաղձանք—տեսնել շուտով վախճանը այն վայրենի ու արիւնոտ նախճիրների, որոնք ոչ միայն հնձում են երկրի լաւագոյն ուժերը, այլ և անարգում են Ռուսաստանին յաչս աշխարհի, այլև վտանգում են նրա դիրքը քաղաքակրթւած պետութիւնների շարքում... Այդ բաղձանքն էլ մերժւեց։ Դուման էլ, ուրեմն, արիւն է ուզում...

Եկէ՛ք ու յուսացէ՛ք այժմ, թէ այդ զազրելի հաստատութիւնից կեանք պիտի գայ հոգեվարք Ռուսաստանին։ Մինչև օրս նա անարժէք էր, տաղտկացուցիչ ու միասակար, այսուհետև նրա բացասական բնաւորութիւնը դառնում է արդէն աղաղակող։ Բաժակը լցւեց բոլոր գիտակից, ամենալաւատես դիտողների համար... Ե՞րբ կը լցւի նա Ռուսաստանի մարտիրոսացած ժողովրդի համար...

Ստոլիպինը գուցէ դեռ երկար կը կրէ իր վրայ Մուրավիօվների „կարմիր վզնոցը“, Ռուսաստանի դահճապետի արիւնազանգ ծիրանին...

Նա „խաղաղացրել է“ հայրենիքը, բայց այժմ գըտնում է իր սև-հարիւրակեան ներշնչողների պէս, որ կայ դեռ մի երկիր, որ չի ճաշակել Ստոլիպինեան „խաղաղացման“ բարիքները և դա Կովկասն է... Ո՞վ է ասում, թէ „Նօվօյէ-Վրեմիա“-ի ու Պուրիշկեվիչների հակահայկական արշաւանքը արդիւնք չի ունենում,— ահաւասիկ նրանից ազդւած՝ նոյնինքն Ստոլիպին և իր կովկասեան սատրապը։ Վօրօնցօվ-Դաշկօվ վերադարձել է Պետերբուրգից բաւականաչափ արդէն „մարզւած“, որոշ, յատուկ հրահանգներով ու ծրագրով։ Նա մուտք գործեց իր թագաւորութեան մէջ, ըստ սովորութեան, ձիթենու ճիւղը ձեռքին պարզած և մի քանի օրից յետոյ սկսեց մասսային որսախուճապ հայ երիտասարդութեան դէմ... Մի ամսից ի վեր շարունակ խուզարկում ու բանտ են նետում հայ ինտելիգենցիայի ականաւոր ներկայացուցիչներին, չը խնայելով նոյնիսկ ամենախաղաղ քաղաքացիներին... Կասկած չը կայ, որ „հայկական ապստամբութեան“ ուրւականը նորէն սկսել է յաճախել Ռուսաստանի բռնապետներին և մենք թերևս հեռու չենք գալիցինեան արհաւիրքների աղէտաւոր վերսկսումից։ Պատմութիւնը գոյութիւն չունի մեր կոյր, վայրագ շէֆերի համար, որոնք սիրում են յաւիտենապէս դեգերել իրենց ստեղծած արիւնոտ հարւածների ու հակահարւածների կախարդական շրջանի մէջ...

Վօրօնցօվ-Դաշկօվ մի ձեռքով զարնում է, միւսով շոյում, փայփայում։ Բանտերի դռները նա լայն բաց է անում հայ ինտելիգենցիայի առաջ և միաժամանակ սիրով ու առանձին պատրաստակամութեամբ այցելութիւններ է անում այս ու այն հայկական հիմնարկութիւնները, կոմպլեմենտներ է տարատանում և գրօշներ է շռայլում։ Նա լաւ գիտէ մեր բուրժուազիայի ու բուրժուական ինտելիգենցիայի թուլութիւնը, լաւ գիտէ և նրանց սիրտը շահելու միջոցները... Նա դեռ հազիւ միայն ոտք էր դրել իր երկրի շէմքում—և լսեց աներևակայելի ներբողներ մեր նաւթային ինտելիգենցիայի խոշորագոյն տուզերի կողմից, ներբողներ, ուր Նիկօլայ II-ը հռչակւում էր „պաշտելի միապետ“, ուր ինքը փոխարքան հանդիսանում էր իբրև „փրկիչներից“ գերագոյնը... Լա՜ւ փրկեց նա մեզ „Կովկասեան Վանդէայի“ ազգակործան արշաւանքից, 1905—906 թւականներում, լաւ է „փրկում“ և այժմ... Սպասեցէք դեռ. Նա դեռ ցոյց կը տայ իր թաւշեայ ճանկերի բոլոր կոպտութիւնը։ Նա դեռ ցոյց կը տայ, թէ ինքն ինչպէս է ըմբռնում „հայկական կուլտուրան“ ու նրա զարգացումը... Բռնապետութիւնը իր էութեամբ իսկ ատող է ճշմարիտ կուլտուրայի ու առաջադիմութեան, հալածող ամեն մի շատ թէ քիչ էական բարեփոխութեան։ Լօզունգը մ է կ է, ամբողջ ցարական բիւրօկրատիան Ֆինլանդիայից մինչև Վարշաւա, մինչև Քռի ու Արաքսի ափերը՝ մէկ նշանաբան է միայն ընդունել — խեղդել „կրամօլան“, հիմքից պոկել ազատ կեանքի ու ազատատենչ գործունէութեան ամեն մի նշոյլ և շուռ տալ անիւը իսպառ դէպի յետ, դէպի նախկին, հակայեղափոխական իդիլլիաները։ Տարբերութիւնը այլ և այլ ծայրերի ռէժիմների միջև՝ անէական է, գրեթէ չ'եղած։ Բարոն Նօլդէն շատ լաւ հաստատեց Դումայի ամբիոնից և փոխարքան էլ շատ լաւ հաստատեց իր զեկուցման մէջ, որ ազատագրական շարժումները Կովկասում ևս խեղդւել են նոյնքան անխիղճ ու վայրագ ձևով, ինչպէս

այլուր, Ռուսաստանում... Ալիխանովները, Երմոլայեւները ու Ալֆտանները նոյն Վօրօնցովեան ռեժիմի տակ էին փռում իրենց ժողովրդասպան, գազանային շահատակութիւնները և բոլորն էլ գնահատւում էին, և բոլորն էլ մեծարւում ու քաջալերւում...

Լօզունգը մէկ է. աջակողմեան բանակն է այսօր Ռուսաստանի տէրը և Պուրիշկեւիչն է, որ տալիս է բռնապետական մահահրաւէր երաժշտութեան *leit-motiv*-ը։

---

## ՈՍՏԻԿԱՆ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

Մի հրէշաւոր, աներեւակայելի սկանդալ... Լրտեսութեան ու դաւաճանութեան տխուր տարեգրութիւնը հարստանում է մի նոր, հսկայական գայթակղութեամբ, որից ցասման ու զարհուրանքի դող է գալիս բոլոր ազնիւ մարտնչողների վրայ...

Ո՞վ չի լսել ռուսական հզօր տերրօրիստական կամ „մարտական կազմակերպութեան" մասին, (Բօյեւայա Օրգանիզացիա), որ սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեան հովանիի տակ, իբրեւ նրա մի անբաժան հատուածը, 8 տարուց ի վեր մենամարտում է բռնապետական հիդրայի հետ, հասցնելով նրան ցաւոտ հարուածներ, գերեզման իջեցնելով մին միւսի ետեւից ռէակցիայի այնպիսի սիւներ, ինչպէս Սիպիագին, Բօգօլեպօվ. Պլէվէ, մեծ իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ (կայսրի հօրեղբայրը), Բօգդանովիչ, համառուսական դահիճ-պրօկուրօր Պավլօվ, Լաունից և բազմաթիւ ուրիշներ։

Եւ ո՞վ կարող էր գէթ մի վայրկեան ենթադրել, թէ այդ անյաղթելի կազմակերպութեան մէջ ոստիկանական մատ է շարժւում, թէ նրա ղեկավարը, նրա հոգին ոստիկանական մի քստմնելի գործակալ է, մի հոյակապ *agent-provocateur*!...

Տարաբախտաբար, դա իրողութիւն է և մենք սրտի խորին կսկիծով ստիպուած ենք այն արձանագրել „Դրօշակ"-ում։ Մի քանի ժամանակից ի վեր լուրը պտտւում էր եւրօպական մամուլի մէջ, մի լուր, որի հրէշաւորութեան ու աբսուրդի հանդէպ բոլոր երկրների յեղափոխականները կարող էին միայն թերահաւատութեամբ ուսերը թօթուել... Բայց ահա փաստը վաւերացւում է ամենաձեռնհաս աղբիւրից. ռուս սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեան կենտրոնական կօմիտէն յայտարարում է ի լուր աշխարհի, որ՝

„Եւգենի Ֆիլիպպօվիչ Ազեվ, 38 տարեկան, յայտնի իր մարտական ծածկանուններով՝ Տօլստի, Վալենտին Կուզմիչ եայլն, կուսակցութեան անդամ, նրա հիմնադրութեան օրերից ի վեր, անդամ մարտական կազմակերպութեան ու կենտրոնական կօմիտէի—ոստիկանական գործակալ է... Նրա դէմ դատ էր սկսուած (կուսակցութեան կողմից), բայց նա փախաւ, նախ քան դատը վերջանալը"...

Կենտրոնական կօմիտէն խոստանում է տալ մօտակայում այդ ահռելի պատմութեան մանրամասները... Ռուսական յեղափոխութեան ամենատխրալի էջերից մէկն է, որ պիտի պարզւի մեր առջեւ և որի հանդէպ պիտի նսեմանան Հայր Գապօնի սխրագործութիւնները։ Գապօն չ'ազատւեց յեղափոխական նեմեզիդայի ահեղ շանթերից, այս մէկն էլ անշուշտ չի վրիպի վրիժառու գնդակից։ Բայց ի՛նչ խղճուկ մխիթարութիւն... Երեւակայութիւնը ահաբեկուած կանգ է առնում, երբ մտածում էք, որ այն հարիւրաւոր անձնուրացները, որոնք տարիներից ի վեր, մահը միշտ աչքերնին առած, դիմել են դէպի քաղաքական „եղեռնափորձերի" կարմիր, արհաւրոտ ճանապարհը, գնացել են պատժելու բռնակալութեան ամենավայրագ ներկայացուցիչներին, երբեմն աջողել, իսկ աւելի յաճախ վրիպել են ու խմբովին ոստիկանութեան ձեռքն են մատնւել, կախաղան հանւել ու գնդակահարւել, որ այդ անհամար երիտասարդ կեանքերը իրենց հերոսական վեհ թռիչքներով խաղալիք են եղել մի քստմնելի, մի անանուն թշւառականների ձեռքում, որը Յուդայի պէս ներս սպրդելով յեղափոխական շարքերի մէջ, միեւնոյն ժամանակ դաշն է կռել ցարական գաղտնի ոստիկանութեան կենտրոնի հետ, նպատակ դնելով շարունակաբար մատնել կազմակերպութեան բոլոր կենսունակ, բոլոր թանկագին մարտնչող ուժերը, ոչնչացնել նրանց բռնակալական սպանդանոցներում և այդպիսով ճարակել, անդամալուծել յեղափոխական բանակը... Սա մի դիւային յղացումն է, որ դժբախտաբար իրագործւել է չափազանց խոշոր, ահեղ ծաւալով, Ազեվի լարած որոգայթների շնորհիւ, վերջին երկու տարիների ընթացքում իրօք ճարակեց սօցիալիստ-յեղափոխական մեծ կուսակցութիւնը, և Ռուսաստանի պարծանքը կազմող ռազմիկ սերունդը գրեթէ իսպառ հնձւեց, ոչնչացաւ զանգւածօրէն, ասես մի վիթխարի, համայնաջինջ կատաստրօֆի մէջ...

Այժմ պարզ է, որ անցեալ տարւայ ցարի ու մեծ իշխան Նիկօլայի դէմ կազմակերպւած մահափորձը եւս Ազեվի ու ոստիկանութեան յղացումն է։ Փորձը, բնականաբար, վիժեց—այդպէս էր արդէն նախորոշւած— և սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեան տասնեակ ամենաընտիր հերոսներ ընկան դահճի հարւածների տակ.

Ահա թէ որպիսի սադայէլական միջոցների է դիմում ցարի կառավարութիւնը՝ իր երերուն գոյութիւնը պահպանելու համար։

Բայց ամենից աներեւակայելին, ամենից անհեթեթն այն է՝ որ նոյն Ազեվի, նոյն գաղտնի ոստիկանութեան սադրանքներին զոհ են գնացել ոչ միայն յեղափոխական լէգէօնները, այլ և ռէակցիայի մի շարք պարագլուխներ, նոյնիսկ արքայազն ներկայացուցիչներ...

Պետական Դումայում տեղի կունենայ, անտարակոյս, հարցապնդում և մինիստր-նախագահը ստիպւած կը լինի բացատրւել... Ամբողջ աշխարհը սպասում է այդ հրէշաւոր առեղծւածի լուծման։

---

# ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

## ԱՐԻՒՆՈՒՇՏ ՅԵՏԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Պարսկաստանը կատարեալ քաօսային դրութիւն մը կը ներկայացնէ, ամեն կողմ կը տիրէ անիշխանութիւն և անորոշութիւն։ Կեանքի գործունէութիւնը կանգ առած է, հաքիմները, պետութեան այդ „սիւները ու նեցուկները", որոնք գերագոյն արհեստաւորները եղած են

ամբողջ ժողովուրդ մը թշուառութեան ու տգիտութեան վիհը նետելու, չեն կրնար վեր բռնել Շահերու տխուր միահեծան շէնքը։ Այդ նիւթական ու բարոյական „վէրանէ"ներուն մէջէն ցցուող ազատութեան ոգիներ են որ կը շարունակեն մղել ռասպելական մենամարտը խաւարին դէմ, բռնապետութեան դէմ։

Պարսկաստանը իր պատմական „լինել չլինելու" ուղեգարձը կը կատարէ, և իր ճակատագիրը անստոյգ և մտատանջող րոպէներ կ'անցնէ. Զրւանը անգամ մըն ալ կըսպառնայ դաւաճանել Իրանի գոյութեան։

Պարսկաստանը ոչ մէկ երկրի հետ չէ կարելի համեմատել. անկերպարանութիւնն է իր բացարձակ տառումով։ Իր մտաւորական ուժերը, որոնց թիւը հետզհետէ կ'աճի, հազիւ կրնան թափանցել այն խոր տգիտութիւնը, որ կոյս անտառի մը պէս հօծ և արհաւրալից է։

Պարսիկ ժողովուրդը „պէտպախտ" եղած է և երբէք չէ ունեցած բարեխիղճ, անշահախնդիր և սրտցաւ վարիչներ։ Աւազակային նւիրապետութիւն մը եղած է Շահինշահերու կառավարութիւնը. ամեն կառավարիչ ինքզինք ճունկլաններուն մէջ դարանակալ վագր մը կարծած է, որսին վրայ խոյանալու համար։ Պարսիկ ժողովուրդը չյետադիմեր, միջոց չկայ այլեւս, այլ կը խրւի թշուառութեան ու տգիտութեան ճահիճին մէջ, ինչպէս Վիկտոր Հիւկոյի Թշուառը։

Մէհմէտ Ալի Շահ, Թէպրիզի մէջ իբր „վէլիահտ" երկար տարիներ շւայտ և հեշտ կեանք անցընելէ յետոյ, Պարսկաստանի էն պատմական նշանակալից րոպէին գահը կը բարձրանայ, բոլորովին անընդունակ և տգէտ իր ժողովրդի ժամանակի պահանջներուն։ Առջի օրէն ցոյց տւաւ ինչ ծաղիկ ըլլալը, և նենգամտութիւնը իրեն քաղաքական վահան ըրաւ։

Մէհմէտ Ալի Շահ, վատթար հակումներու մարդն է, կառավարել՝ կը հասկնայ քամել իր ժողովուրդը անգթօրէն և ցոփ ու „սէրխօշ" անառակութիւններու մէջ ուզածին պէս հեշտաթաւալիլ։ Պարսկաստանը 150 միլիոն պարտք ունի, այդ պարտքը, որ երկրին անունով եղած է, մսխւած է միայն և միմիայն Շահերու և իր ղօլամներու ճամբորդութեան և քէյֆին համար. երկիրը փուլ մը խեր չէ տեսած անկէ։ Քաճարները՝ պարսիկ ժողովուրդը շլացուցած են ու թողած իրենց համաստեղւած հալւններով, փէշքէշ խալաթներով, թագով ու ցցունքով. և այդ դժբախտ ժողովուրդը, իր... մեծութեան հմայքը տեսնել կարծած է այդ շողարև գոհարներուն մէջ, որոնցով կը սիրամարգւէին և կը սագւէին անարժէք և „անարի" վեհապետները Իրանի։

Նոր սերունդը սահմանադրութեան շնորհիւ փորձեց սանձ դնել Շահերու կամայականութեան և անհաշիւ ու շռայլ վայրավատնումին. այս բանը դիւր չեկաւ Շահերուն ու խաններուն, որոնց համար ժողովուրդը նախիր մըն էր և կթան կով։ Շահը, հաւատարիմ աւանդական իր կոչումին, և Ռուսաստանի ուղղակի թելադրութիւնով ու քաջալերութիւնով, ռմբակոծեց Խորհրդարանը 1908 յունիս 23-ին և չարաչար սպաննեց ազգին ներկայացուցիչներէն քանիները, թէև քանի քանի անգամ երդում տւած էր հաւատարմութեան։ Սա կը կոչւի սահմանադրութիւն à la Մէհմէտ Ալի Շահ։

Անգլօ-ռուս համաձայնութիւնը Պարսկաստանի մասին, պարզ կատակերգութիւն մըն է։ Շահը Ռուսիոյ ոլորտին մէջ կը գտնուի և իր բոլոր չարագործութիւններուն մէջ՝ անոր բարոյական ու նիւթական թաքուն աջակցութիւնը կը վայելէ։ Ինք չէ որ տէրն է երկրին, այլ Լիախօվ, ռուս անկիրթ սպայ մը, որ կը հրամանատարէ Շահին „անմահից գունդը"։ Ապա թէ ոչ անհնար է որ այդպիսի մէկը, որ ոչ զինւորական ուժ ունի և ոչ ալ խելք, կարող ըլլայ դիմադրել երկու մեծ ազգերու պահանջին։ Ռուսիա կը հովանաւորէ զայն ի նպաստ իր երկդիմի քաղաքականութեան, որովհետև Ալի Շահէն աւելի՝ Իրանի թշնամի մէկը չէր կարող փնտռել և գտնել։ Անգլիա և Ռուսիա, հակառակ իրենց մեծադղորդ... և „մեղօք" համերաշխութեան Պարսկաստանի սահմանադրութիւնը ապահովելու համար, իրարու հետ աչքկապուկ կը խաղան։ „Պարսկաստանի խռովութիւնը կրնայ... ոևէ պետութեան մը միջամտութիւնը առաջ բերել", կ'ըսէր Անգլիոյ արտ. գործ. Նախարարը։ Արդեօք դիւանագիտական դաւադրութիւն մը չէ՞ն պարուրեր այս խօսքերը։

Շահը, արդէն հակամէտ ամեն խարդաւանանքի, անհեթեթ ու աներես „պէլի"ներով կը խաղցնէ Անգլիա և Ռուսիա, ըսելով որ իր ժողովուրդը „իսլամի օրէնքին արհամարանք" կը համարի սահմանադրութիւնը, հետևապէս կը մերժէ։ Պարսիկ հոգևորականութիւնը, որ այնքան ճկուն է և յեղյեղուկ, յաճախ գործիք կը գտնուի Շահի չիլ ու ազգադաւ ձգտումներուն և գիտէ բռնաբարել Գուրանի պատւիրաններու ոգին ի նպաստ դաւաճան բռնակալութեան։

Մէհմէտ Ալի Շահ դռեհիկ ու անճարակ կերպով կը ցուցադրէ ինքզինք և չկրնար իսկ պարտկել իր բարբարոս հակումները. անգլիական թերթ մը իրաւամբ կ'ըսէր. „Մինչև ե՞րբ Անգլիան պիտի շարունակէ ճանչնալ Պարսկաստանի վեհապետ փոքրիկ բռնակալ մը, որ ուրիշ բան չէ, բայց եթէ աւազակ և երդմնադրուժ մը"։

Այնպիսի րոպէի մը, երբ իր երկրին ազատութիւնը թնդանօթի կը բռնէր, Շահը, պետական հարուածներու այդ հերոսը, յանդգնութիւն ունեցաւ սուլթանը շնորհաւորել. թիւրք Խորհրդարանի բացման առթիւ։ Սա արևելեան բութ հեգնութիւնն է և կեղծաւորութիւնը, որ ծիծաղելիութեան գիտակցութիւնը չունի։

Երկրին և ազատ Իրանի բարեկամներու յոյսը կեդրոնացած է Թէպրիզի վրայ։ Ատրպատականի մայրաքաղաքը ապստամբութեան դրօշակը ցարդ յաղթականօրէն բարձր բռնած է։ Շահի զօրքերը հետզհետէ կուգան և կը ջախջախւին անոր պատնէշներուն առջև, հոն ձգելով իրենց յոխորտանքները և յաճախ թնդանօթները։

Յեղափոխական բանակը բաւական ուժեղ է, մանաւանդ, շնորհիւ փորձ ուժերու և խորհուրդներու աւելի կազմաւորւած և բարեկարգւած, կարող է ընդերկար ետ մղել Շահի վարձկան և շօշօկ պաշիպօզուքները, որոնք թալանի համար միայն կը կռւին։ Սատտար խան շփւելով գիտակից ու զարգացած մտքերու հետ, աւելի կը հասուննայ քաղաքականապէս և մտաւորապէս։ Ինքը անգրագէտ, բայց օժտւած բնական խելքով ու ուշիմութիւնով, գիտէ գնահատել ուրիշներուն կարծիքը և նշանակութիւն տալ անոնց։ Պարսիկ ժողովրդին աչքին ժողովրդական հերոսի մարմնացումը դարձած է ան, որ կը կռւի բռնակալութեան դէմ և անպարտելի է։ Պարզակեաց է, և այդ „խաչաղ" ասպետը, իր իսկ օրի-

նակով, գիտէ խրախուսել իր զինուորները, միշտ կռուի առաջին շարքերուն մէջ նետուելով:

Շահին զօրքը՝ թալանի և սպանութիւններու յատկացուած հօրտա մըն է: Այդ հազարաւոր վոհմակն էր որ Մուժամբար հայ գիւղին մէջ տասնեակ հայ ֆէտայիներու քաջագործութեան առջևէն, հարիւրաւոր դիակներ ձգելէ յետոյ, կատուի պէս փախաւ, անպաշտպան ու անզէն գիւղացիներէն իրենց վրէժը առնելու համար:

Այն լուրը, իբր թէ հայ ֆէտայիներ կան Սատտար խանի բանակին մէջ, Շահի և իր յետադէմ արբանեակներուն մէջ գրգռում առաջ բերեր է. և մինչև իսկ սպառնալիք եղած է հայերը ջարդելու։ Պարսիկ Շահերը և խաները այդպիսի դաժանային խելագարութիւններու ընդունակ են: Անոնց գլխուն մէջ արիւնի գետեր կը կարկաջեն, վագրեր կը ցատկրտեն: Այդ լկտի քաղաքականութիւնը Արևելքի վեհապետներուն կառավարելու մէկ սիստէմն է, այն է մասնաւոր դէպքերը ընդհանրացնելով սարսափեցնել ամբողջ ժողովուրդ մը: Դժբախտաբար առաջին հանդիպած բախտախնդիրը, որ քիչ իշխանութիւն ձեռք կը ձգէ, իր ուժը կը փորձէ հայերու գլխուն և ամենաանշան պատրուակը մահապարտ յղացում մը կը դառնայ անոնց մէջ: Կովկասի մէջ, չնչին դէպք մը, „Նօվօյէ Վրէմիայի" մէջ, ռուս-ճափոն պատերազմի չափ աղմուկ կը հանէ. և ահա վայրենաբարոյ Սուվօրինը պանդէշին վրայէ „ի զէն" կը գոռայ ամբողջ Ռուսաստանին հայերուն դէմ և այդ „մարդակերը", իր եղեռնագոյն թերթին մէջ չդադրիր քսութեան ու զըրպարտութեան տքնաջան և անխոնջ յօդւածներ ոստայնանկել:

Սատտար խան հերոս մըն է, որ կը կռուի իր երկրի ազատութեան համար, ինչպէս այդ եղած է ուրիշ երկիրներու մէջ: Այդպիսի ազատութեան կռիւները միշտ հիացողներու և արկածախնդիրներու մէջ խանդավառութեան յորձանքներ առաջ կը բերէ: Անթիւ են անոնք, ամեն ազգի մէջ, որոնց մէջ արիւնը եփ կուգայ և որ փառք կը սեպէին երթալ կռուիլ արդար դատի մը համար, ինչպէս հին թափառիկ ասպետները, բաւ է որ Ազատութիւն ըլլայ նպատակը: Կարիպալտիի „հազարեակը" ազգերու խայտաբղէտութիւն մըն էր, ամեն ազգէ կամաւորներ, որոնք անձնուիրութեան հրաշքներ գործեցին, փութացած էին Աւստրիոյ դէմ մարտնչիլ. Յունաստանի կռուին ատեն Չիբրիանի իրեններով վազեց թիւրքերուն դէմ կռուելու. Պօէրներու հերոսական կռուին Անգլիա իր դէմ գտաւ՝ ֆրանսացի և այլ անձնուէրներու բանակ մը, որոնց մէջ կային և իռլանտացիներ, թերևս և անգլիացիներ, որոնք իրենց սուրը կը բերէին Պօէրներու ազատութեան սպաս դնելու: Սա ժողովուրդներու մէջ բարոյական զգացողութեան և մարդկային բնական համերաշխութեան ազնւական մեծ գիծն է, որ մարդուն միայն յատուկ է: Ազատութեան սէրը հայրենիք չունի. ով որ քաջ է և սիրտ ունի, իրեն առջև բաց է աշխարհ. իրեն հրացան մը հարկաւոր է և գնդակ: Եթէ Սատտար խանին հայեր օգնութեան գացած են, ինչպէս ուրիշ ազգեր, նոյն համաշխարհային պատմական երևոյթին արդիւնքն է. հոն ազգերը ոչինչ ունին պատասխանատու: Անգլիա Իռլանդիայի դէմ չդարձուց իր նաւերը, որովհետև անոր զաւակներէն շատերը իր դէմ կը պատերազմէին: Ի հարկէ Շահերու ու խաներու գանկերը չեն կրնար ըմբռնել՝ մեծութիւնը գաղափարին, և չեն հասկնար որ զէնքի շառաչիւնի և վառօդի հոտի անզուսպ սիրահարներ կան. „ժէստի" մարդիկն են անոնք որ՝ խորին կարեկցութիւնով մը դէպի ժողովուրդներու անլեզու տառապանքը, կը սուրան հոն, ուր կռիւ կայ բռնակալներուն դէմ, ուր պէտք է կեանքեր ու պատիւներ ազատել անօրէնութեան ճիրաններէն, ինչպէս Շահի զօրքերը վազեն հոն, ուր... ալանթալան կայ: Արհեստդ ի՞նչ է, կը հարցնէին մէկ օր հայ հերոսի մը որ ձերբակալուած էր, — Յեղափոխութիւն, կը պատասխանէ հայ մարտիկը: Անոնք Շահերու կամ Ցարերու քմահաճոյքէն կախում չունին, անոնք այնպէս կը ծնին, ինչպէս... արեգակնափայլ Շահերը, այդ „գիտութեանց ծովերը", Սուլթանները, Տօվլէնները, Մօլքերը կը ծնին յղփանալու ու անառակելու համար տարաբախտ ժողովուրդներու թշուառութեան ափերուն վրայ:

Քիչ հասկացողութիւն և բարեխղճութիւն հարկաւոր էր որ նոր Շահը հետամուտ և խելամուտ ըլլալով իր երկրի զարհուրելի վիճակին, աւելի պարկեշտ և նպատակայարմար քաղաքականութիւն մը ձեռք առնէր: Երբեմն վեհապետներ կան որ մեծ արժէք մը չունին, բայց բաւական ուշիմ են հասկնալու իրենց ժողովրդին հոգեբանական ու պատմական րօպէն: Մէհմէտ Ալի Շահ, ընդհակառակը, կը նկրտի զայն ցեխին մէջ խրել, ջլատել անոր իդէալական ձգտումը և հրել զայն վայրագ ու անհրապոյր մոլեռանդութեան գիրկը — որ է կորուստի անդունդը:

„Ամեն մոլութիւն որ իշխանին հաճելի է, առաքինութիւն մը կը դառնայ", կ'ըսէ պարսիկ առած մը:

Պարսից Շահերը, դժբախտաբար, իրենց գարշելի մոլութիւններու... առաքինութիւնները փէշքէշ ըրած են միայն իրենց հպատակներուն:

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ՅՈՎԱԿԻՄ ԱՉԸԳԿԷՕԶԵԱՆ

—

Տարի մը առաջ 1907 դեկտ. ամսուն, Աքիայի բանտին մէջ, առկայծ կանթեղի մը պէս կը հանգէր ողբացեալ և չքնաղ ընկեր մը, Յովակիմ Աչըգկէօզեան: Իր անունը կապուած է սերտօրէն յեղափոխութեան ճգնաջան նախաքայլերուն հետ, երբ անընկճելի և արգասաւոր հաւատքն էր որ կ'առաջնորդէր սրտերը և հոգիները: Աչըգկէօզեան յեղափոխական առաքեալներէն էր, որ նոր շաւիղներ կը բանան ամբոխի հոգեբանութեան մէջ և գիտակցութեան կայծը կը դնեն հոն: Աքիայի խաւար և ախտաւեր բանտերուն մէջ չէր որ վախճան պիտի գտնէր այդպիսի սրտոտ ու աւիւնով լի գաղափարական երիտասարդ մը, որ ազատութեան ու արևու շքեղ ճառագայթներուն յաւիտենական ըղձանքը ունեցաւ:

Աչըգկէօզեան բնիկ Ինիէցի էր (Տրապիզօնի նահանգէն:) Իր ուսումը աւարտած է Էջմիածնայ Գէորգեան ճեմարանին մէջ. ըմբոստ և անհանգիստ բնաւորութեան տէր, կը պատկանէր էջմիածնական այն սե-

ռունդին՝ որ Գնունիներ տուաւ։ 1885-ին ճեմարանը աւարտելով ինքզինքը նուիրեց նոր սերունդի կրթութեան և բաւական տարիներ Տրապիզոնի, Իւնիէի և Սամսոնի մէջ դասատուի պաշտօն վարեց։

1896-ին, իր կնոջ մահէն յետոյ, իր մէկհատիկ երկամեայ աղջիկը յանձնելով ազգականներու հոգածութեան, նետուեցաւ յեղափոխութեան բուռն կեանքին մէջ և դաշնակցական ընկերներու շարքերում համակրելի տեղ գրաւեց։



ՅՈՎԱԿԻՄ ԱՉԸԳԿԷՕԶԵԱՆ

Նոյն տարեշրջանին, երբ Սամսոնի ուսուցչական պաշտօնը ձգեց, մեկնեցաւ Պաթում և շրջեցաւ Կովկասի կարևոր քաղաքները. քիչ յետոյ Պաթումի ճամբով անցաւ Օդեսա, անկէ Քիշնէվ և Վառնա։ Այս վերջինիս մէջ քանի մը ամիս ուսուցչութեան պաշտօն վարելէ յետոյ, անհանգիստ ուղևորը վերադարձաւ նորէն Կովկաս, անկէ Պարսկաստան։ Իր ուղևորութեան նպատակակէտը Հայաստանն էր։ Շատ չանցած՝ ոտք դրաւ հայրենի որբ երկրին մէջ, իբրև ջահակիր ազատութեան գաղափարին։ Ընդունակ և եռանդուն, Աչըգկէօզեան յաճախ գիւղացիի, տէրվիշի և մոլեռանդ մահմեդականի ձևին տակ կը շրջէր տեղէտեղ, երբ Վանի մէջ, մատնութեան մը վրայ, ձերբակալուելով բերուեցաւ Պոլիս։

Մէկուկէս տարի կեդր. բանտին մէջ մնալէ ետք, մահավճիռ տուին, որ յետոյ փոխուեցաւ ցկեանս բերդարգելութեան։ Այս վճիռը բաւական յոյս ներշնչեց դժբախտ Յովակիմին, թէ ազատ բերդարգելութիւն մը պիտի ըլլար իր պատիժը, բայց այնպէս չեղաւ, զինքը փոխադրեցին Աքիայի բանտը։

Իր բանտարկութեան ամբողջ ժամանակամիջոցին մէջ, եօթուկէս տարի, ջանաց բանտէն ազատուիլ և բերդաքաղաքը մտնել. որու համար ամեն կողմ դիմումներ ըրաւ, մանաւանդ Օրմանեան պատրիարքին. նոյնիսկ իր որբ աղջիկը աղերսագրեց պատրիարքին, խնդրել կառավարութենէն, որ զինքը հօրը քովը ղրկեն, այն յոյսով, որ իր ներկայութիւնը բաւական սփոփանք մը պիտի ըլլար իր դժբախտ և սիրեցեալ հօրը։

Պատրիարքը, ինչպէս միշտ, քարսիրտ և խուլ մնաց հէք և որբ Անտիգոնի պաղատանքներուն։ Աչըգկէօզեան այլևս յուսահատ և ճարահատ դուրսի աշխարհէն գթութենէն, ստոյիկեան համբերութիւնով մը սպասեց իր ճակատագրի վախճանին։ Խոնաւ ու անարև բանտին մէջ թոքախտի սերմերը արդէն սկսած էին լափել անոր կտրիճ մարմինը. բժշկական խնամքները այլ ևս չէին զօրեր։ Շատ չի քշեց, մահը եկաւ ազատեց զայն իր տանջանքներէն։

Բանտին մէջ, ինչպէս կը վկայեն շատեր, ընկերականութեան անզուգական տիպար մը եղած է. ին․ որ ինք կըստանար դրսէն, իբր նպաստ հաւասար և անխտիր կը բաժնէր բանտակից ընկերներուն հետ, նոյնիսկ գիտնալով որ յաջորդ օրը անօթի պիտի մնար։ Բանտի բոլոր ընկերները անոր մէջ կը տեսնէին և կը հիանային բարոյական ու եղբայրական մեծ ուժ մը, ատոր համար անոր մահը խորապէս ազդեց անոնց վրայ և բանտի արհաւիրքը աւելի ծանր զգացին։

Ահա թէ ինչ կը գրէ բանտակից ընկեր մը Յովակիմի վերջի րոպէներու մասին։

„Վերջապէս ինծի պիտի վիճակուի եղեր գուժը ձեզի հաղորդելու տխուր պարտականութիւնը։ Ամենուս սիրելի Յովակիմը հոգին աւանդեց 1907 դեկ. 19—20-ի գիշերը, լուսնալու մօտ, ժամը 5-ին։ Անխուսափելին էր որ կատարուեցաւ. միակ մխիթարութիւնը որ կը մնայ մեզի, իր խաղաղ ու առանց հոգևարքի մահն է. հիւանդութեան սկզբէն մինչև վերջը տրտունջ մը, գանգատ մը չելաւ բերնէն, արի համակերպութիւնով մը մեռաւ։

„Տեղս հայ կղեր չգտնուելուն, օրթոտօքս եկեղեցին կատարեց թաղումը։ Մարմինը տարին եկեղեցի, ինչ որ ոչ մէկ բանտարկեալի կըլլար, հոն օրթոտօքս եպիսկոպոսը զգեստաւոր և ամբողջ քահանաներով շրջապատուած կը կատարէ արարողութիւնը. դագաղին կը հետևին բազմաթիւ յուղարկաւորներ մինչև գերեզման։ Սա ակներև ապացոյց մըն է այն սիրոյն և համակրութեան, որ Յովակիմը կը վայելէր նոյնիսկ բանտէն դուրս։ Պարապը զոր կը թողու հայ բանտարկեալներու մէջ շատ մեծ է. անոր մահը ամենքս ալ կ'ողբանք, որովհետև եղբօր մը, պաշտպանի մը դերը կատարած էր մեր մէջ, ամենքս ալ երախտաւոր թողած։ Անոր օրհնեալ յիշատակը յաւէտ անջնջելի պիտի մնայ մեր ամենուս սրտին մէջ“…

Ի վերջոյ իր ընկերը կ'առաջարկէ շիրիմ մը կանգնել անձնուէր յեղափոխականին անշուք հողքին վրայ անոր յիշատակը անմոռաց պահելու համար։

Այս սրտաշարժ տողերը վեր կը հանեն թէ Աչըգկէօզեան անզուգական և ազնուական հոգի մը եղած է, և թէ իդէալի սիրոյն կրցած է հերոսութիւնով և փիլիսոփայօրէն ծծել դառնութեան բաժակին վերջին կաթիլը։ Սուլթան Համիդի տմարդի թագաւորութիւնը այսպիսի ստեղծագործութիւններն էր, որ հնձեց աշխարհի երեսէն։

Ճշմարիտ և սիրելի հերոսի մը մահն է անոր մահը. անոր յիշատակը խանդավառող յիշատակներէն է որ կանմահանան Պլուտարքոսի գրչին տակ։ Հայ յեղափոխութեան „Ոսկեղէն մատեանին“ մէջ Աչըգկէօզեանի կեանքը մաքուր և առաքինի կեանքի էջ մը կարող է աւելցնել այնքան հիանալի հերոսներու համաստեղութեան մէջ...

# ԿԱՐՕ

## (ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂԱՋԱՆՆԵԱՆ)

Համբարձում Աղաջանեանը աստրախանցի էր. ծնուել է 1877 թւին։ Նրա հայրը, Մկրտիչ, արհեստով դերձակ էր. Նա առաջին ամուսնութիւնից ունէր երկու աղջիկ. իսկ երկրորդ ամուսնուց միմիայն Համբարձումն է։



Վերջինիս ծնւելուց անմիջապէս յետոյ մեռնում է մայրը և երեխային վերցնում են պահելու մօտ ազգականները։ Նախնական կրթութիւն նա ստացել է Աստրախանի ծխական ուսումնարանում և այնուհետև տեղափոխւում է Աստրախանի Հայոց Արհեստաւորաց ուսումնարանը իբրև գիշերօթիկ սան. այնտեղ նա սովորում է հիւսնութիւն։ 1893 թ. աւարտում է յիշեալ ուսումնարանը և սկսում է բանել Աստրախանի արհեստանոցներում իբրև հիւսն՝ ամսական 7—9 ր.։

1895-ին թողնելով արհեստը մտնում է Կասպեան ծովի վրայ բանող Նաւի մէջ իբրև Նաւաստի և տեղափոխւում է Բագու։ Բագւում մտնում է Ալէքսանդր II-ի ծովագնացների ուսումնարանը. միաժամանակ ապրելու միջոց հայթայթելու համար բանում էր նաև արհեստանոցներում. այդպէս շարունակւում է մինչև 1897 թւի ապրիլ ամիսը։

Այդ ժամանակ Համբարձումը ծանօթանում է Բագւում եղած դաշնակցականների հետ և ոգևորւելով եղած տրամադրութեամբ, թողնում է ամեն բան և բուռն կերպով նւիրւում է յեղափոխական գործունէութեան։ Քիչ յետոյ վճռում է գնալ մարտական խմբերի հետ երկիր։ Նրան իր մտերիմ ընկեր Մկրտիչ Սուլթանեանցի, Աստուածատուր Միրզաեանցի (Կրէտացի) և մի քանի ուրիշների հետ 1897 թւի ապրիլ ամսին ուղարկում են դէպի Սալմաստ։ Նա մասնակցում է Խանասօրի կռւին. այդ կռւում կորցնում է իր ընկերներին՝ Սուլթանեանցին և Կրէտացուն և նոյն տարւայ սեպտեմբերին վերադառնում է Բագու, ուր մտնում է ծառայութեան Բալախանում և մինչև 1904 թիւը անցնում է համեմատաբար խաղաղ կեանք։

1904 թ., երբ կուսակցութիւնը համախմբում էր իր ուժերը երկրում և թէ որոշ կէտերում ձեռնարկներ անելու, Կարօն թողնում է ծառայութիւնը և իրան դնում է կուսակցութեան տրամադրութեան տակ։ Նոյն թւի մայիս ամսին նա կուսակցութեան յանձնարարութեամբ անցնում է Բուլղարիա, այնտեղից Պօլիս և մի շարք այլ վայրեր. Նոյն 1904 թւի նոյեմբերին վերադառնում է Բագու, ուր նոյնպէս ամբողջապէս իրան նւիրում է կուսակցական գործունէութեան և առ հասարակ մինչև իր կեանքի վերջը ապրում է բացառապէս կուսակցական կեանքով։

Բագւում և Կովկասում նրա վրայ դրւած է եղել բազմապիսի յանձնարարութիւններ. կազմակերպել է Կենտր Կօմիտէի յանձնարարութեամբ մարտական խմբեր և մի շարք ահաբեկումներ. Ճանապարհորդել է Հիւսիսային Կովկաս և այլ վայրեր, իբրև „փոթորիկի“ ներկայացուցիչ։ 1907 թւին, երբ նա գտնւում էր կովկասեան հանքային ջրերում, նրան յանձնարարւեց կազմակերպել Մ-ի և իր ընկերների ահաբեկման գործը։ Չը նայելով որ հիւանդ էր ոսկրացաւով և ջղերի քայքայումով, Կարօն անմիջապէս կլանւեց այդ գործով։ Մի քանի անգամւայ պատահած անյաջողութիւնը նրա վրայ շատ ծանր էր ազդել ու ճնշում էր նրան, երբ Պեատիգօրսկում մահափորձը չի յաջողւում և Մ-ն տեղափոխւում Եալտա՝ Կարօն էլ անմիջապէս ընկերներով գնում է նոյն վայրը։ Այնտեղ մի մահափորձ կատարելուց յետոյ նա մի քանիսի հետ բռնւում են և տեղափոխւում Սիմֆերօպոլի բանտը։ Ամբողջ 10 ամիս բանտում մնալուց յետոյ, 1908 թւի մայիսի 20 Սևաստոպոլում զինւորական դատարանը 7 հոգու, որոնց մէջ և մի կին, մահւան է դատապարտում։ Ի վերջոյ Կարօին, Մարտիրոսին և ռուս Բագրովին իբրև ղեկավարների կախաղան են բարձրացնում, իսկ միւսների մահւան պատիժը փոխւում։

Թէ բանտում մինչև դատը և դատից յետոյ, Կարօն և իր բոլոր ընկերները իրանց պահել են շատ արիաբար, որի մասին վկայում են թէ Կարօի գրածները բանտից և թէ նրա մահից յետոյ բանտից ստացած ընկերների նամակը, որ ներփակած ուղարկում ենք ձեզ։

Կարօյի դատապարտւելուն մեծապէս նպաստել են

Միհրանի մանրութիւնները, որ ճանաչելով Կարօյին ցոյց է տուել՝ որ նա է եղել իր դէմ մահափորձեր կազմակերպողը և մի շարք այլ ահաբեկումների հեղինակը: Կարօն բանտում յայտնի էր Կարապետ Աւագեան անունով և մինչև վերջն էլ իր իսկական անունը չը յայտնեց կառավարութեան:

## ԿԱՐՕՅԻ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԻ ՊԱՏՃԷԸ

9 յուլիս, 1908

Սիրելիք! Չէի սպասում, որ դեռ այնքան կապրիմ, որ մէկ էլ հնարաւորութիւն կ'ունենայի Ձեզ գրել. բայց ահա և եղաւ ինձ անսպասելին: Ա՜խ սիրելիք իմ, որքան տարօրինակ է ինձ համար հնչում ապրել խօսքը, չը գիտեմ ինչո՞ւ է որ այդպէս բոլոր մարդիկ ինչ պայմաններումն էլ լինեն, ինչ դրութեան և հասակի լինեն, պինդ երկու ձեռներով փաթաթւում են այդ կեանքի փէշերից, չէ՞ որ այդ կեանք կոչւող բանը, որը մեզնից փախչում է, իսկ մենք նրա ետևը ընկած հա ուզում ենք հասնել և երբէք չենք կարողանում, մի բան է, որ մեզնից ոչ մի կախում չունի և մեր ցանկութիւնը բոլորովին չի էլ հարցնում երբ ուզում է հեռանալ, ուրեմն էլ ինչով բացատրել, որ մենք միշտ և ամեն ժամանակ յաճախ ստորանալով ուզում ենք այդ կեանք կոչւող բանը պահել գէթ մի օր, գէթ մի ժամ, արդեօք միթէ չենք կարողանում հասկանալ, որ այս րօպէին պահպանած և ազատած կեանքը առանց մեզ հարցնելու միւս րօպէին կը թողնի մեզ, ի մեծ զարմանս մեր, իբրև մի անշնչացած ոչնչութիւն—ուրեմն էլ ինչո՞ւ էր մեր այդքան ահ ու դողով կեանքի (ապրելու) փէշերից կախւիլը:

Անշուշտ սիրելիք իմ Ձեզ կը զարմացնի իմ այս փիլիսոփայութիւնը, բայց չը պիտի զարմանաք եթէ իմանաք որքան ինքս ինձ այդ և նման հարցեր եմ տուել, հէնց դրա համար էր որ նամակիս սկզբում ասում էի թէ չէի սպասում, որ մէկ էլ կը գրեմ (3-րդ նամակս է): Ես ինձ յաճախ եմ տուել հարց, թէ ես էլ գուցէ նոյն իսկ այս րօպէիս նմանւում եմ այն փոքրոգի անմիտներին, որոնք գէթ մի օրով, մի րօպէով աւել են ուզում ապրել, թէկուզ ինչ գնով էլ լինի այդ ապրելը (այս բոլորը լինում է ցրւելը): Իսկ գիշերները քանի քանի անգամ վերջնականապէս որոշել եմ, որ այս րօպէիս ես վերջ կը տամ ապրելուս, բայց ի մեծ զարմանս միւս անգամւայ նոյնանման րօպէի գալուն, էլի տեսել եմ, որ ապրում եմ դեռ և նորից եմ ստիպւած մեռնելը որոշել. ահա եկէք և գտէք թէ ինչու է այդպէս, եթէ իմանայիք այդ 20 օրւայ ընթացքում ինչ է անցել և ինչ օրեր ու գիշերներ, մանաւանդ ժամ ու րօպէներ են անցել, այն ժամանակ ի հարկէ միայն կարող կը լինէիք հասկանալ իմ ապրելուս վրայ զարմանալս. 20 օրւայ ընթացքում 10 մարդ են կախած և այդ կատարւում է գիշերը, երբ ամբողջ բանտը մեռելային լռութիւն է տիրում և ամենափոքրիկ ձայնը արձագանք է ունենում ամբողջ բանտում. երբ մենք դեռ դատապարտւած չէինք, կախեցին 3 հոգու: Ծանր էր, շատ ծանր այդ գիշերը և միւս օրը բոլոր քաղաքական կորպուսը սով յայտարարեց մի օրւայ (մահւան դատապարտւածները նոյն կորպուսն են նըստած), իսկ այդ վերջին տասը հոգուն կախելուց արդէն ուրիշ բան էր, որ նկարագրել չի լինի, այլ միայն կարելի է զգալ (կախեցին 6 հոգու 31-ի գիշերը լոյս 1-ն յունիսի, իսկ միւս 4 հոգուն 3-ի գիշերը, որոնց կամերը հիմա մենք 4 հոգով ենք ապրում). գիշերւայ այդ մեռելային սուսունութեանը մէջ յանկարծ թափւում են ստրիկան և ժանդարմներ հարբած ահագին թխթխկոցով և յարձակւելով դատապարտւածների վրայ քաշ են տալիս. լսւում է գնացողների շղթաների ձայները և վերջն էլ „պրօշշեայտէ տավարիշչի", ես ասում եմ՝ լսւում է չը կարծէք թէ այնպէս հեռւից, ոչ, բոլորը կատարւում է քո կամերիդ կից, կամ դիմացը, և դեռ չը գիտես թէ քեզ մօտ են գալիս, քո դուռը պիտի բացւի, թէ կպած կամ դիմացի դուռը. իսկ դու այստեղ՝ նոյն վիճակը սպասող մէկը՝ փակւած չորս կողմից, շըղթայակապ սպասում ես, թէ հա կը գան, հիմա կը գան. և այդպիսի րօպէներն են որ զարմացնում են թէ ես դեռ ապրում եմ՝ և թէ ինչո՞ւ, չը գիտեմ. ասում եմ չը գիտեմ, որովհետև Ձեր աշխատանքից ոչինչ չեմ սպասում ինձ և Մարտօյի համար. գուցէ դուրս պրծեցնեն մնացած 4-ին (շէկին չեմ հաշւում). չը գիտեմ ինչո՞ւ ես կարծես հաւատում եմ՝ նրանք կապրեն և հէնց դրա համար էր այդ վճռողական րօպէներին ինքս ինձ . . . . . . . . . . . . . . . .
եմ թողնում որ վերջ տալ, որովհետև նրանք շատ են անփորձ և դեռ չեն կարողանում մահւան հետ հաշտւել, իսկ իմ չ'ապրելս նրանց բոլորովին կը յուսահատացնի (երևի այդ էլ իմ ապրելս արդարացնելու համար միտքս է ինձ թելադրում), բայց այսպէս թէ այնպէս դեռ շնչում եմ այդ դժոխքի, այդ սպանդանոցի մէջ. կը տանեմ թէկուզ նրանց, տղաներին, սիրտ տալու համար առաջս սպասած այդ րօպէները մինչև իրենք կը գան կը վերցնեն ինձ թէ չէ չը գիտեմ, միայն կասեմ որ մահը հազար անգամ հեշտ է քան այդպէս ապրելը, այն էլ որ վերջը գան տանեն կախեն:

Ջերմ համբոյրներ:

---

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՔԱՐԲԱԲԵԱՆ

1882 — 1906

Լոռւա ամբողջ հասարակութիւնը լաւ է ճանաչում, թէ ով էր Գրողգովը, մի մարդ, որ ամբողջ շրջանը տարիների ընթացքում քայքայում ու բարոյապէս մեռ-



ցնում էր, մանաւանդ տխրահռչակ Գօլիցինի օրերով, որի եղբայրը Ղարսում ընկաւ նոյնպէս Դաշնակցութեան ահաբեկիչի ձեռքով: Ռուս կառավարութեան հաւատարիմ և գործունեայ լրտեսն էր, որի պատճառով շատ և շատ յեղափոխական ընկերներ են տուժել: Բայց յանցաւորն ստացաւ իր արժանի պատիժը: Հ. Յ. Դ. [ ] կենտր. Կօմիտէի վճռով նա մահւան պատժի ենթարկւեց և այդ որոշումն իրագործելիս էլ զոհ գնաց

երիտասարդ Յովհաննէսը (դեկտ. 21-ին 1906)։ Նա իր ընկերների մէջ յարգուած էր, իբր յանդուգն աշխաբեկիչ. իր գլուխ-գործոցն եղաւ Գրօզդովի սպանութիւնը, երբ Թիֆլիսի փողոցներում, զինքը հետապնդող պահակների ու զինուորների դէմ 2 ժամ շարունակ կռուելով, մինչև կայարան յաղթական առաջացաւ։ Զօրքը այն ատեն կարողացաւ գնդակահար անել նրան, երբ արդէն Յովհաննէսի ռազմամթերքը սպառած էր։

Յովհաննէսի կոչումն էր անձնուրացութիւն և նա երբէք չդաւաճանեց իր հերոսութեան։

## ԽԱՉԱՏՈՒՐ ԳԷՈՐԳԵԱՆ

Խաչատուրը ծնած էր 1872-ին Պոլանըխի Շէյխ-Եաղուպ գիւղը։ Մատղաշ հասակին մէջ, դեռ 14 տարեկան, կը թողու իր հայրենի կիսաւեր օճախը և օտարութեան ցուպը ձեռքին կը մեկնի հեռու երկիրներ, պանդխտութեան մէջ արիւնքրտինքով ձեռք բերած խեղճուկրակ դրամով զուլումի երկրին մէջ ապրող իր սիրելիները ապրեցնելու համար։ 1886-ին, Ռուսաստան գաղթող իր երկրացիներուն հետ կը գնայ Թիֆլիս, ուր մէկ տարի աշխատելով կ'օգնէր հայրենիքը եղող իր ծերունի հօրն ու մօրը։



Խէչօյի հայրը իր որդուն կարօտէն չկրնալով դիմանալ կը մեկնի Թիֆլիս և զաւակը հետ առնելով կը բերէ տուն, գլուխը կը կապէ և հողին,—երկրագործութեան կը նուիրէ զայն։ Աւելի խելահաս և աւելի աչքը բացուած, Խէչօն ականատես կ'ըլլայ հայ ժողովրդի տառապանքին և կըզգայ անոր խորին դառնութիւնն ու հրէշութիւնը։ Անոր մէջ ընդվզումի առնութիւնները կը զարթնին, իր զգացումները կը դիմեն յեղափոխութեան։

Յեղափոխական կազմակերպութիւններու գոյութեան և նպատակի մասին իր հետաքրքրութիւնը օրէօր կ'աճէր։ 1893-ին թողլով արօր և լծկան և ընտանիք կանցնի Թիֆլիս, ուր, բռնաւորի ատելութեան բորբոքը սրտին մէջ, կը դիմէ Հ. Յ. Դաշնակցութեան որ զինքը ընդունին նուիրուած գործիչներու շարքը։ Այդ օրէն Խէչօն եռանդուն ու անխոնջ քարոզիչ և կազմակերպիչ մ'եղաւ իր երկրացիներուն և ընկերներուն մէջ և իր շուրջը կազմակերպական շարքերը ստուարացուց։

Համեստ այլ քաջասիրտ, Խաչատուրը ուր որ ոտք դնէր՝ յեղափոխական ընկերներու թիւը կ'աճէր։ 1898 թ. անցաւ փօթի, ուր ընկերները կը կազմակերպէր և անոնց կը սորվեցնէր զինավարժութիւն։ Միշտ ոգևոր, միշտ սրտանց իր յեղափոխութեան գաղափարին, Խէչօն կը փոխադրուի Բաթում, այնտեղ ևս կը փայլի յեղափոխականի պարտականութեան իբր արի զինուոր։

1905-ին, հայ-թաթարական կռիւներու միջոցին, Պաթումի Կեդր. կոմիտէի որոշումով կ'ուղարկուի Շուշի-Ղարաբաղ իր ընկերներով տեղական հայ ժողովրդի պաշտպանութեան գործին աջակցելու համար։ Ազատութեան այդ զինուորը, որ իր վրայ կը միացնէր կարճութեան հետ նաև փորձառութիւն, մեծ ծառայութիւն ըրաւ հայ ժողովրդին, այնպէս որ անոր տրուեցաւ խմբապետի պաշտօն։ Թէ իր ընկերները և թէ ժողովուրդը հիացմունքով կը խօսէին Խաչատուրի պարկեշտ նկարագրի և անձնուէր քաջագործութիւններու մասին։

1907-ին Արևել Բիւրօյի կողմէ Խէչօ կ'ուղարկուի Պարսկաստան կազմակերպչական գործերով։ Սալմաստի գաւառին մէջ կըզբաղէր ինքնապաշտպան խումբերու կազմակերպութիւնով, երբ 1908 մայիսին աէռօրի դաւադրուած սրիկայի մը պատճառով դժբախտ պատահարի մը զոհ կերթայ։

Ամբողջ Սալմաստը, ամբողջ իր ընկերները ողբացին այնիւ ու քաջ զինուորին անակնկալ ու երիտասարդ մահը։

Խէչօն մտադրած էր անցնիլ իր բնագաւառը Պոլանըխ, կազմակերպելու և մարտական խմբեր կազմելու համար։ Զինուորական յեղափոխութիւնը յանձին Խէչօյի, կորսնցուց երախտաւոր ու քաջ զինուորներէն մէկը, որուն նմաններուն այնքան կարօտ ունէր բազմաչարչար հայրենիքը։

## ԻԼՁԷ ՖՐԱՊԱՆ

Ժընէվի մօտ, Grand Lancy-ի իր բնակարանում, ինքնասպանութեամբ վերջ դրեց իր կեանքին՝ ծանօթ ֆէմինիստ-ընկերվարական՝ գերմանուհի Իլզէ Ֆրապան։ Նուիրուած երկար տարիներից ի վեր „մարտական գրականութեան“, արծարծելով իր տաղանդաւոր գրչով, իր բազմաթիւ վէպերի մէջ սօցիալական արդարութեան և տառապող, հարստահարուած մարդկութեան դատը, նա սաստիկ հետաքրքրուեց վերջին տարիներում հայ ժողովրդի ճակատագրով և մանաւորապէս թիւրքաց Հայաստանի անլուր, արիւնալի մարտիրոսութեամբ, որ շատ քիչ սրտեր էր յուզում Ֆրապանի գրանիտեայ հայրենիքում... Հանգուցեալը կազմակերպեց մի շարք հրապարակական դասախօսութիւններ Գերմանիայի այլ

և այլ քաղաքներում, ուր ձգտում էր ոչ միայն ազդել ունկնդիրների զգացումների վրայ, շարժել նրանց մարդասիրական կարեկցութիւնը, այլ ճիգ էր թափում և հասկացնելու իր ազգակիցներին, որ քաղաքակրթութեան մի փառահեղ բեկոր է կորսւում հեռու արեւելքում, որ նորագոյն կուլտուրայի հաղորդակից մի ժողովուրդ է մարում այնտեղ, սոսկումների աշխարհում, լծի, սովի, եաթաղանի տակ... և որ հետևապէս քաղաքակիրթ մարդկութեան պարտաւորութիւնն է՝ օգնութեան հասնել։

Նոյն մտքերը Իլզէ Ֆրապան արծարծում էր բրօշիւրների մէջ, որոնցից մէկը „*Die Armenier und der Zarismus*“ խորագրով, նուիրուած է ռուսահայ իրականութեան, գրուած է Թուրք-հայկական մեծ ընդհարումի ազդեցութեան տակ։ Նրա առաջին յօդուածը հայ ժողովրդական տառապանքի ու յեղափոխական դիւցազներգութեան մասին լոյս տեսաւ տարիներ առաջ „Դրօշակի“ մէջ, մի ցնցող, խորապէս զգացուած ջատագովական հայ կռւողների հասցէին, որ կրում էր իբրև էպիգրաֆ Շիլլերեան „Տէլլի“ գոռ, բոցաշունչ մարտահրաւէրը՝

„*Eine Grenze hat die Tyrannenmacht!...*“

Հայ ժողովրդական դատը, հայ մարտական կազմակերպութիւնը երկար տարիների ճգնաժամային գոյութեան ընթացքում ունեցան, իբրև մխիթարութիւն, անկեղծ, վշտակից բարեկամների մի ստուար բոյլ արեւմուտքում, որոնք իրենց բարոյական աջակցութեամբ, իրենց ջերմ, գիտակից կողմնակցութեամբ խրախոյս եղան ազատագրութեան զինուորներին։ Իլզէ Ֆրապան պատկառելի տեղ է գրաւում նրանց շարքերում և այսօր վշտի ու երախտագիտութեան զգացումով է, որ „Դրօշակի“ խմբագրութիւնը իր յարգանքն է մատուցանում վեհանձն կնոջ յիշատակին։

# ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ՀՈՍԱՆՔԸ

### ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄ *)

### II

Մենք բնորոշեցինք այդ նոր հոսանքը, որ յաւակնում է ուրոյն դիրք բռնել ժամանակակից սօցիալական շարժումների մեծ աւազանում և որ իր տիպիկ արտայայտութիւններով հանդէս է գալիս յեղափոխութիւնների դասական վայրում—Ֆրանսիայի մէջ։ Տեսանք, որ նա յենւում է միայն և միայն սինդիկատների (*syndicats*) կամ արհեստակցական միութիւնների վրայ, մերժելով այսպէս անուանուած „մտաւորական դասակարգի“ մասնակցութիւնը, մերժելով պարլամենտարիզմը և պայքարի ուրիշ ձևերը, որոնք ուղղակի առնչութիւն չունին սինդիկատների ամենօրեայ „անդուլ ու անողոք“ տնտեսական պայքարի հետ։

Ունենալով իբրև միակ հաւատոյ հանգանակ „արտադրողների փիլիսոփայութիւնը“ և հռչակելով, որ բանւորների ազատագրութիւնը պէտք է կատարւի բացառապէս բանւորների ձեռքով՝ այդ նոր հոսանքը, ինչպէս տեսանք, միանգամայն ժխտական դիրք է բռնում դէպի բոլոր գոյութիւն ունեցող սօցիալիստական կուսակցութիւնները և համարում է ինքզինքը բուն, հարազատ, անաղարտ սօցիալիզմի արտայայտութիւն։ Ցանձին իր գլխաւոր թէօրետիկոս-առաջնորդների (Ժորժ Սորէլ, Արտուրօ Լաբրիօլա եայլն)՝ նա պնդում է, որ ինքը իսկական, հարազատ թարգմանն է Մարքսի նախնական վարդապետութեան, որ Կարլ Մարքսը եղել է ճշմարիտ յեղափոխական սինդիկալիստ։ Նոյն իսկական, „ուղղափառ մարքսիզմի“ անունով սինդիկալիզմի ռահվիրաները ժխտում են ոչ միայն մտաւորականութեան ու պարլամենտական գործունէութեան դերը, այլ և պրօլետարիատի ապագայ „դիկտատուրան“, դերիշխանութիւնը, ժխտում են պետութեան բոլոր ձևերը, ժխտում են և հայրենիքի գաղափարը... „Բանւորները հայրենիք չունին“ („Կոմմունիստական մանիֆեստ“)... Նոյն „հարազատ, անաղարտ մարքսիզմի“ անունով՝ նրանք կատաղութեամբ, գրեթէ զզւանքով մերժում են առհասարակ „անուղղակի“ կռւի մեթօդը և ջատագովում են „ուղղակի, անմիջական գործողութիւնը“ (*action directe*) — կռիւ ուղղակի, ճակատ առ ճակատ ամբողջ բուրժուազիայի ու պետութեան դէմ, ընդհանուր ու մասնակի գործադուլներով, կռիւ բռնութիւններով ու արիւնհեղութիւններով, „կեանքի ու մահուան մշտնջենական ճակատամարտ“... մինչև որ հասնի վերջին վճռական Ընդհարումը, կամ ուրիշ խօսքով Սօցիալական Մեծ Յեղափոխութիւնը, ուր պիտի խաւարէ կապիտալիզմի արեգակը, պիտի տապալւին բուրժուազիայի հետ պետութեան բոլոր ձևերը—միապետութիւն, սահմանադրութիւն, ռամկապետութիւն եայլն—և սինդիկատները, արտադրողների (*les producteurs*) ազատ ու համատարած դաշնակցութիւնը, իբրև կացութեան միահեծան տէր, իր ձեռքը պիտի գրաւէ ազգային բովանդակ հարստութիւնը, արդիւնագործութեան բոլոր միջոցները—հող, գործարաններ, հանքեր, մեքենաներ, կապիտալ եւն—և պիտի հիմնէ երկրի վրայ տնտեսական հաւասարութեան ու ճշմարիտ եղբայրութեան թագաւորութիւնը...

Մարքսի ծանուցած կատաստրօֆը սինդիկալիստների հասկացողութեամբ՝ ոչ այլ ինչ է, բայց եթէ Ընդհանուր Գործադուլը, որ պիտի մտցնէ մարդկութիւնը այդ ապագայ աշխարհի մէջ *)։

*

Ճիշտ է, մարքսիզմը իր չափազանց առաձգական բնաւորութեան շնորհիւ, իր բազմատեսակ, յաճախ հակընդդէմ յայտարարութիւններով՝ տեղիք է տալիս բազմաթիւ թիւրիմացութիւնների. Ճիշտ է, նրա անունով երդւում են յաճախ և իրաւամբ ամենատարբեր սօցիալիստական հոսանքների ներկայացուցիչները, և՛ ծայրայեղ արմատականը, և՛ ծայրայեղ օպպորտիւնիստը, և՛ Կաուցկին և՛ Բերնշտայնը, և՛ անգամ Միլրանն ու Վիվիանին, և սինդիկալիստը և՛ նոյնիսկ կարմիր անիշխանականը.—սակայն և այնպէս յեղափոխական սինդիկալիզմի պարագլուխները փոքր ինչ բռնաբարում են պատմական ճշմարտութիւնը, հռչակելով իրանց, որպէս բուն, հարազատ մարքսիզմի հարազատ հետևողներ և իրենց դաւանանքն ու տաքտիկը, որպէս միանգամայն համապատասխան Մարքսի վարդապետութեան ճշմարիտ ոգուն։

Այո, անշուշտ, որոշ մտքեր ու յայտարարութիւններ, ցիր ու ցան բազմաթիւ մանր ու խոշոր գրուածքների մէջ, „Կապիտալի“, „Կոմմունիստական մանիֆեստի“ և մանաւանդ „Փիլիսոփայութեան թշուառութեան մէջ“ (*La Misère de la Philosophie*)—կարող են առիթ տալ ժամանակակից սինդիկալիստներին հաստատելու, որ Կարլ Մարքսը ունեցել է զուտ „սինդիկալիստական մտածելակերպ“, որ նա ըմբռնել է դասակարգային կռիւը նոյն սիմպլիստ, միակողմանի ու տարամերժ, չոր ու կոպիտ եղանակով, որով ըմբռնում են այն՝ Ժորժ Սորէլ, Պելլուտիէ, Լաբրիօլա և ուրիշները։ Սակայն, մի փիլիսոփայի, մի սօցիօլօգի վարդապետութիւնը պէտք է քննել ու գնահատել ոչ թէ նրա ծագման, այլ զարգացման, հասունացման շրջանում։ Արդ, եթէ վերցնենք մարքսիզմը իր էւօլիւցիայի վերջին շրջա-

*) Տես „Դրօշակ“ № 8։

*) *G. Sorel, La Décomposition du Marxisme*, էջ 60։

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Ը ն կ ե ր ն ե ր,

Ի նկատի ունենալով, որ մօտիկ ապագայում տեղի է ունենալու Մեծ քաղաքի Հ. Յ. Դաշնակցութեան հերթական շրջանային ժողովը, յայտնում ենք բոլոր ընկերներին և մարմիններին, որ շրջանային ժողովի օրակարգի դատական մասում լինելու է երբեմնի դաշնակցական Շ ա հ է ն ի երեք զեղծումների քննութեան խնդիրը։ Թէև նա ներկայումս գտնւում է մի այլ քաղաքական խմբակցութեան հովանու տակ, բայց այդ հանգամանքը չի կարող խանգարել դատի բնական ընթացքին, մանաւանդ որ Շահէնը հեռացել է մեր կուսակցութիւնից այն ժամանակ, երբ նրա կատարած զեղծումները երևան եկան և առաջ բերին զայրոյթ ընկերների կողմից։

Սրանով առաջարկում ենք Շահէնի դէմ բողոք ունեցողներին, օր առաջ և գրաւոր կերպով ներկայացնել Կ. Կոմիտէին իրենց բողոքը, որպէս զի այդ բոլորը մինչև այժմ ստացւածների հետ միացնելով, ներկայացնենք քննութեան շրջանային ժողովին։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿ. | Կ. ԿՈՄԻՏԷ

17 Նոյեմբերի

---

Ը ն կ ե ր ն ե ր,

Մեր շրջանի զանազան կողմերէն լուր կը տրւի թէ բախտախնդիր անձեր Հ. Յ. Դաշնակցութեան անունով գիւղեր կը քալեն և ինքնագլուխ կարգադրութիւններ կ'ընեն, դրամ կը հաւաքեն և մինչև իսկ տերրորներ կ'որոշեն։ Ներկայ շրջաբերական նամակով մէկ անգամ ընդ միշտ կը յայտարարւի մեր շրջանի բոլոր մարմիններուն և ընկերներուն, թէ այսուհետև ոչ մէկ մարդ պէտք է ընդունիլ իբրև Հ. Յ. Դաշնակցութեան անդամ և անոր հետ գործ ունենալ, որ չունի մեր Կ. Կոմիտէի կնիքը կրող վկայական. նոյնիսկ Կովկասէն եկած ամեն մէկ ընկեր անպայման պէտք է ունենայ տեղիս Կ. Կոմիտէէն վկայական։

ԲԱՐՁՐԲԵՐԴԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

---

Նոյեմբերի 3-ին Սօչիում Հ. Յ. Դաշնակցութեան անհաբեկիչների անվրէպ գնդակից մահւան մատնւեց Լօօ գիւղացի յայտնի մատնիչ Մ ե ս ր ո պ Մ ի ն ա ս ե ա ն ը։

Տերրորիստները ազատ են։

Այս Մեսրոպը ծանօթ և վաղեմի մատնիչ է. նա առաջինը սկիզբ դրեց մատնութիւններին համեմատաբար մաքուր ճանաչւած այդ շրջանում՝ դեռ 1905-ին մատնելով դրացիներին զէնք պահելու մէջ։

Թւում էր, թէ նախազգուշացումը բաւական պիտի լինէր յետ կենալու զզւելի արհեստից, սակայն նա կազմակերպութեան առաջին քայլը թուլութեան նշան համարելով, սկսաւ աջ ու ձախ մատնութիւններ անել, անմեղներին բանտարկել տալ, աքսորի ենթարկել ու կաշառքներ վերցնել՝ միացած խուլիգան ու մեքենայ պաշտօնեաների հետ։

Իր զզւելի արհեստի մէջ աներկիւղ յառաջադիմելով՝ ամբողջ Չերնօմօրեան նահանգում սարսափ տարածեց, գիւղական ժողովրդի առաջ այլասերման ճանապարհ բաց արեց, ճարպիկ գործակալ դառնալով սև ռէակցիայի սև գործունէութեան։

Արդ, նա չքացաւ, որպէս մի զզւելի տիպ, մի աւելորդ անգամ ևս ապացուցանելով, որ մատնիչներին ու դաւաճաններին չկայ փրկութիւն յեղափոխականի արդար ու վրիժառու գնդակից և որ այդպիսիները ուշ կամ կանուխ իրենց արժանի պատիժը պիտի կրեն։

Ո՛չ ռէակցիան, ոչ էլ աշխատաւոր ժողովրդի թշնամի մի իշխանութիւն կարող է փրկել նրանց անդառնալի կորստից։

Թո՛ղ կորչեն մատնիչները ու դաւաճանները։

Կեցցէ՛ աշխատաւոր դասի պաշտպան յեղափոխութիւնը,

Հ. Յ. ԴԱՇՆ. ԿՈՎԿ. ԱՀԱՐԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

---

Ընկերներու և հայ հասարակութեան ի գիտութիւն կուգանք յայտնել, որ երբեմն՝ «Դրօշակի» խմբագրութեան մէջ ծառայող Գ ա լ ո ւ ս տ Յ ա կ ո բ ե ա ն, բնիկ աստրախանցի, կազմակերպութեան պաշտօնական նամակաթղթերէն գողանալով, Աստրախանի հայ հարուստներուն սպառնագրեր ղրկած էր Ժընևէն և Լօզանէն, անօնցմէ, յանուն Արևմտեան Բիւրոյին՝ դրամ պահանջելով։

Յանցաւորը քննիչ ատենի մը առջև խոստովանեցաւ իր արարքը և իր քովէն գրաւեցան մնացած պաշտօնական նամակաթղթերը։

Մեր հասարակութեան նորէն անգամ մըն ալ կը յայտարարենք, որ Դաշնակցութեան 1907-ի Ընդհ. ժողովի որոշումով խստիւ արգիլւած է սպառնալիքով դրամ պահանջելը, և եթէ այսպիսի կասկածելի դէպքեր պատահին՝ կը խնդրենք դիմել և հաղորդել ուէ դաշնակցական մարմնի։

Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

---

## Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն

**Արեւմտեան Բիւրօն ստացած է՝**

Յ. Կ. Պալաբեան 75 ֆր. (3 անգլ. ոսկի) Մէլբուռն (Աւստրալիա)։

Ս. Մարկոսեան 5 ֆր. 5 ս. (1 դոլ.) Ջաֆինըօս (Յունաստան)։

ԻԶՄԻՐԻ ՄԷՋ ի նպաստ Դաշնակցութեան կատարւած հանգանակութեան արդիւնք առաջին անգամ մի չէկով 599. 3 | 11 անգլ. ոսկի երկրորդ անգամ 701. 2 | 6 անգլ. ոսկի, երրորդ անգամ 90. 17 | 4 անգլ. ոսկի, չորրորդ անգամ 50 անգլ. ոսկի։

**Նախիջևանգաւի Կեդր. կոմիտէն՝**

(Շարունակ. նախորդից եւ վերջ)

ԿԱՅԾԻ ԿՈՄԻՏԷՆ 1905 թւին.—Դիսակ խմբից 86 ռուբլի, Նէմրութ 120. 50, Աղբամար 78, Տարօն 64. 50, Կարին 76. 50, Վասպուրական 82. 50. Տիգրանակերտ 22. 50, Ուշտունիք 49. 50, Վան 63. 50, Խնդրակատար 84, Մօկան 96, Տուժիկ 66, Կայծակ 66, Առիւծ 93, Մայօր 50, Ծուռ-պոզ 87. 50, Գեսակ 47. 40, Շահան 47, Զէյթուն 285. 50, Նորագոյն 141, Բայլ 21, Կայծ 265, Նախիջեւան 38. 50, Անդրանիկ 1. 50, Ծննդեան աւետիսից 100, Ներկայացումից 71. 10, Տուգանք 29, Կարապ-Խաչօյից 5, Մարտ. Վասակից 6 ռուբլի։

ԱՄԱՌԱՆՈՑԻ ԵՆԹԱԿՈ ՄԻՏԷՆ 1905 յունւար—1906 սեպտեմբեր.— Հետեւեալ խմբերից՝ Արարատ խ. 16. 40, Պանդուխտ պատանեաց 10, Մահ 14, Սուրբ Իգիթ 26. 50, Կաթնաղբիւր 20. 50, Ջրաբերդ-լուսաբեր.ասողիկ 21. 50, Արիւնարբու 22. 50, Ջրաբերդ-լուսաբեր ասողիկ 11. 50, Պանդուխտ պատանեաց 15, Կաթնաղբիւր 20. 50, Մահ խ. 14. 50, Արիւնարբու 20, Պանդուխտ հայրենասիրաց 54. 40, Սուրբ Իգիթ 26. 20, Արարատ 22. 20, Մահ 15, Պանդուխտ պատան. 12. 50, Շիրվանից 15, Վէլիման 5, Արիւնարբու 29, Կաթնաղբիւր 20. 50, Սուրբ իգիթ 36. 50, Պանդուխտ հայրենասիրաց 27. 90, Գարուն 6, Արարատ 17. 30, Ջրաբերդ-Սեպուհից 100, Շաւարշից 25, Սիրամար հայրենեաց 42, Սուրբ Իգիթ 39, Ջրաբերդ լուսաբ. ասողիկ 64, Մահ 27. 50, Պանդուխտ պատանեաց 23. 95, Կաթնաղբիւր 40. 65, Արիւնարբու 38. 50, Արարատ 24. 50, Պանդուխտ հայրենասիրաց 84. 40, Մահ 13. 50, Լուսաբեր ասողիկ 14, Ջրաբերդ-սիրամր. հայրենեաց 20, Պանդուխտ պատանեաց 14. 40, Սուրբ Իգիթ 25, Մռուտ 54, Մահ 12. 50, Ջրաբերդ-լուսաբեր 17, Պանդուխտ պատանեաց 13. 50, Ճար-

